



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

FINANCIAL SECTOR
DEEPENING PROJECT

ԱՊԱԳԱՅԻ ՊԼԱՆՆԵՐ, ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ



**Ի՞նչ է պետք իմանալ
ապագայի պլանավորման,
խնայողությունների և
ներդրումների համար**

Սույն հանրամատչելի ձեռնարկը մշակվել է ԱՄՆ ՄԶԳ ՀՀ ֆինանսական ոլորտի զարգացման ծրագրի կողմից և նպատակաուղղված է նպաստելու բնակչության լայն շրջանների տեղեկացվածության և գրագիտության բարձրացմանը իրենց ապագայի ֆինանսական պլանավորման, ինչպես նաև խնայողությունների և ֆինանսական ոլորտում մատուցվող ներդրումային ծառայությունների վերաբերյալ:

ԱՊԱԳԱՅԻ ՊԼԱՆՆԵՐ, ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Բովանդակություն

Ներածական խոսք

Ինչից սկսել

Մենք դա կարող ենք

Կարող ենք արդյոք մենք կատարել խնայողություններ և ներդրումներ

Ի՞նչն է մեզ խանգարում

Ի՞նչն է մեզ խանգարում խնայողություններ և ներդրումներ կատարելու համար

Ապագայի պլանավորումը

Որքա՞ն գումար է անհրաժեշտ մեր նպատակների իրականացման համար

Գնահատենք մեր հնարավորությունները

Ի՞նչ հնարավորություններ ունենք խնայողությունների և ներդրումների համար

Եկամուտներ, ծախսեր, խնայողություններ

Եկեք սկզբում վճարենք մեզ

Խնայողություններն ու ներդրումները մեր ծախսերի առաջին շարքերում

Թաքնված հնարավորություններ

Ինչպե՞ս կրճատել առօրյա ծախսերն ու տնտեսել վաստակի մի մասը

Ժամանակի գործոնը

Փողի ժամանակային արժեքը

Ժամանակն ու արժեքը կունենան չափազանց գումարների հիմնական թշնամիներն են

Պարզ և բաղադրյալ տոկոսներ

«Տոկոսի տոկոսը», կամ ի՞նչ ժամկետում են կրկնապատկվում մեր ներդրումները

Հապաղման կամ հետաձգման գինը

Ներդրումների հետաձգումներն աններելիորեն մեծացնում են մեր ծախսերը

Մեր փաստացի եկամուտները

Անարդյունավետ ներդրումները, հարկերը և արժեքը կունենան մեր փաստացի եկամուտները

Խաղամուղություն, թե՞ ներդրումներ

Ինչու՞ ենք շատերս ներդրումներ կատարելու փոխարեն վիճակախաղի տոմսեր գնում

Ներդրումների իրականացում

Ինչպե՞ս են եկամուտ բերում մեր ներդրումները

Փողի հավելաճը և տոկոսը

Ռիսկ և եկամուտ

Որքան բարձր է սպասվող եկամուտը, այնքան մեծ է կորուստների հնարավորությունը կամ ռիսկը

Որտե՞ղ ներդրում կատարել

Ավանդներ, թանկարժեք մետաղներ, անշարժ գույք, հնաոճ իրեր, արժեթղթեր, կոլեկտիվ ներդրումներ և այլն

Գործընկեր կազմակերպության ընտրությունը

Ի՞նչպես կարող ենք ընտրել կազմակերպությունը, որի հետ ցանկանում ենք աշխատել

Մեր հիմնական սխալները

Ի՞նչ սխալներ են գործում սկսնակ ներդրողները

Ամփոփում

Հավելված

ՀՀ բանկերի և ներդրումային կազմակերպությունների ցուցակ

Հարգելի ընթերցող

Բոլորս գիտենք, որ փողն ինքն իրեն չի աճում: Առավել ևս, պահարանում կամ բարձրի տակ: Սակայն իրականում, փողը կարող է “աշխատել” մեզ համար և աճել, եթե մենք տնտեսենք այն և խելամիտ ներդրումներ կատարենք:

Բոլորս ձգտում ենք լինել ֆինանսապես ապահովված և ապրել բարեկեցիկ կյանքով: Սակայն միայն փոքրաթիվ հաջողակներն են մեծ ժառանգություն ստանում կամ ունենում կայուն և զգալի եկամտի աղբյուր: Ուստի բոլորիս համար օգտակար է իմանալ, թե ինչպես կառուցել կամ բարելավել մեր ապագա ֆինանսական ապահովվածությունն ու բարեկեցությունը՝ անկախ ժառանգության կամ կայուն եկամտի առկայությունից:

Դրա համար առաջին հերթին պետք է իմանալ, որ շատերիս համար ֆինանսական ապահովության կամ բարեկեցության ստեղծման և բարելավման լավագույն միջոցը շրջահայացորեն կատարված խնայողություններն ու ներդրումներն են:

Այդ խնդրի լուծման համար մեզ անհրաժեշտ է նախ որոշել, թե ինչու և ինչպես տնտեսել և ուր ներդնել մեր տնտեսած միջոցները: Այս առումով ոչ այնքան կարևոր է, թե ինչքան փող ունենք, այլ խնայողությունների և ներդրումների աշխարհում ճիշտ կողմնորոշվելն ու հնարավորինս շուտ սկսելը: Այս առումով առաջին հերթին եկեք հստակեցնենք մեր պատկերացումները տնտեսումների, խնայողությունների և ներդրումների մասին, տալով դրանց այն բնորոշումները, որոնց մենք հետևելու ենք այս գրքուկի շրջանակներում:

Տնտեսումը մեր չժախսած գումարն է, կամ մեր եկամտի այն մասն է, որը մնում է մեր տրամադրության տակ ընթացիկ ծախսերից ու հարկերի մուծումից հետո: Այլ կերպ ասած, տնտեսումը մեր եկամուտների մի մասը՝ այժմ ծախսելու փոխարեն հետագայում ծասելու մեր ընտրությունն է: Դրանական միջոցների տնտեսման համար մենք ձգտում ենք մեծացնել մեր եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը, որի դեպքում տեղի է ունենում մեր տնօրինման տակ մնացող գումարի հավելում:

Տնտեսված գումարը մենք կարող ենք պահել պահարանում, բարձի տակ կամ որևէ թաքստոցում, որտեղից այն կարող ենք հետագայում հանել և օգտագործել մեր կարիքների համար: Այս դեպքում պահված գումարի մեծությունը չի ավելանում, քանի որ այն մեզ համար չի “աշխատում”, այլ ընդհակառակը՝ կորցնում է իր “արժեքը” ժամանակի ու արժեզրկման ազդեցության պատճառով և այլն:

Սակայն մենք կարող ենք փորձել տնտեսված գումարը ոչ միայն պահպանել կուրուստից և ժամանակի ու արժեզրկման քայքայիչ ազդեցությունից, այլ նաև լրացուցիչ կերպով “աշխատեցնել” մեզ համար, կատարելով որոշակի խնայողություններ և ներդրումներ: Դրա համար մենք կարող ենք տնտեսված գումարով ոչ միայն որևէ անձնական գործ սկսել, այլ նաև պարտք տալ, կամ ինչ որ բան գնել, որպեսզի այդ նպատակով օգտագործած գումարից ավելի շատ գումար ստանանք հատագայում:

Խնայողությունը մեր տնտեսած գումարի այն մասն է, որը մենք հետագայում տնօրինելու և արժեզրկումից ու հնարավոր այլ կորուստներից պաշտպանելու նպատակով կուտակում ենք բարձր իրացվելի և հուսալի դրամական կամ այլ արժեքների տեսքով: Խնայողությունների կատարման ժամանակ մենք առանձնապես չենք կարևորում սպասվելիք եկամուտները և ձգտում ենք նվազագույնի հասցնել հնարավոր ռիսկերը:

Ներդրումը մեր տնտեսած գումարի կամ խնայողությունների այն մասն է, որը մենք լրացուցիչ եկամուտ ստանալու նպատակով տեղաբաշխում ենք համեմատաբար ավելի մեծ եկամուտ խոստացող ներդրումային գործիքներում, միաժամանակ դիմելով որոշակի լրացուցիչ ռիսկի:

Այս գրքույկը կարդալով, մենք

- *Որոշակի պատկերացում կկազմենք խնայողությունների և ներդրումների մասին:*
- *Կհմանանք, որ լրացուցիչ եկամուտներ ստանալու համար անհրաժեշտ է տնտեսել վաստակած գումարների մի մասը և հաշվենկատ ներդրումներ կատարել:*
- *Կհմանանք թանկարժեք մետաղներում, զարդեղենում, բանկային ավանդներում, արտարժույթում, անշարժ գույքում, հնաոճ իրերում, արժեթղթերում և այլ ոլորտներում ներդրումներ կատարելու հնարավորությունների ու առանձնահատկությունների մասին:*
- *Կհամոզվենք, որ տնտեսած փողն աշխատեցնելու միջոցով լրացուցիչ եկամուտ ստանալու լավագույն եղանակներից մեկն արժեթղթերում ներդրումներ կատարելն է, ինչը կարող է ապահովել պարբերական տոկոսային եկամտով, ներդրված դրամազւխի աճով կամ երկուսը միասին:*
- *Որոշակի գաղափար կկազմենք այն մասին, թե որ արժեթղթերում և ինչպես ներդնել խնայված միջոցները:*
- *Որոշակի տեղեկատվություն կստանանք այն մասին, թե ինչպես ստուգել և ընտրել ներդրումային գործիքներն ու ներդրումային ծառայություններ առաջարկող կազմակերպությունները, որպեսզի չդառնանք կեղծիքի կամ սխալների զոհ:*

Ոչ ոք չի կարող երաշխավորել, որ մեր ներդրումներն անպայման մեծ կարողություն կբերեն մեզ: Սակայն, եթե սովորենք խնայողությունների և ներդրումների հիմունքները, ապա սկզբունքորեն կարող ենք մաս դառնալ հաջողակ ներդրող, ձեռք բերել լրացուցիչ եկամուտներ և վայելել մեր տնտեսած միջոցների ներդրման և կառավարման դրական արդյունքները:



Մենք դա կարող ենք

Կարող ենք արդյոք մենք կատարել խնայողություններ և ներդրումներ

Հանրահայտ փաստ է, որ շատերի համար եկամուտների և ֆինանսական ապահովության հիմնական աղբյուր են հանդիսանում խելամիտ խնայողություններն ու ներդրումները: Ընդ որում, հաջողակ ներդրողներից շատերը խնայողությունների և ներդրումների վերաբերյալ իրենց նախնական գիտելիքները ձեռք են բերում նմանատիպ հանրամատչելի գրքույկներից:



Նույնիսկ համեստ ներդրումներից սկսելով, բազմաթիվ մարդիկ տարբեր երկրներում կարողանում են բարելավել իրենց բարեկեցությունը և լուծել իրենց ֆինանսական խնդիրները: Խնայողությունների ու ներդրումների միջոցով նրանք կարողանում են զնել տուն կամ ավտոմեքենա, վճարել ուսման համար, ապահովել բարեկեցիկ կյանք անաշխատունակության, գործազրկության կամ ծերության ժամանակ և այլն: Եթե տարբեր երկրներում դա հաջողվում է շատերին, ապա պետք է հաջողվի նաև մեզ:

Ի՞նչն է մեզ խանգարում

Ի՞նչն է մեզ խանգարում խնայողություններ և ներդրումներ կատարելու համար

Իհարկե խնայողությունների և ներդրումների իրականացման համար մեզանից շատերին խանգարում են սահմանափակ եկամուտները, ընթացիկ ծախսերը, արժեզրկման սպասումները, ներդրումային դաշտի թերզարգացվածությունը և նմանատիպ այլ գործոններ: Սակայն շատերիս համար հիմնական խանգարող հանգամանքներից մեկը մարդկային մտածելակերպն է:

Այս հիմնական խոչընդոտի հաղթահարման համար առաջին հերթին եկեք վերհիշենք խնայողություններ և ներդրումներ չկատարելու մեր պատճառներն ու բացատրությունները, մտորելով մասնավորապես ստորև ներկայացված շատերիս հայտնի մի քանի տարածված տարբերակների շուրջ:

<input type="checkbox"/>	«Ես դեռևս ժամանակ ունեմ ներդրումների մասին մտածելու համար»:	?
<input type="checkbox"/>	«Ունի՞ց եմ հետ ստանալու իմ ներդրած գումարները, վաստակած փողս նորից չե՞մ կորցնի»:	
<input type="checkbox"/>	«Ի՞նչ ներդրում: Պարտքերի մեջ թաղված ենք: Ծայրը ծայրին չենք հասցնում»:	
<input type="checkbox"/>	«Ու՞ր ներդնենք, հոգնեցինք խաբվելով ու փող կորցնելով»:	
<input type="checkbox"/>	«Վաուչերների ներդրումներից և ստացած բաժնետոմսերից ի՞նչ հասկացանք, որ հիմա նորից փող ներդնենք»:	
<input type="checkbox"/>	«Նախկինում հետ չստացած փողերը քիչ են, հիմա էլ բաժնետիրական ընկերություն, բաժնետոմս, ներդրում, դիվիդենդ, բրոքեր, բորսա, զնանշում՝ բան էլ չենք հասկանում»:	

Խնայողությունների ու ներդրումների նկատմամբ շատերիս բացասական վերաբերմունքը բնութագրող այս և նմանօրինակ այլ բնորոշ մտքեր իրենց մեջ դառը ճշմարտության մեծ բաժին ունեն: Սակայն դրանք մեզ չեն օգնում, այլ ընդհակառակը՝ խանգարում են լուծելու մեր ապագայի ֆինանսական խնդիրները:

Իսկ ի՞նչ կփոխվի, եթե այսպիսի ավելի գործնական «մտքեր պտտվեն մեր գլխում».

<input type="checkbox"/>	«Ապագայում փող ունենալու համար այսօրվանից պետք է տնտեսեմ և ճշտեմ նպատակներս ու անելիքներս»:	!
<input type="checkbox"/>	«Կարող եմ սկսել քչից և հետևել, թե ինչպես են աճում իմ փորձնական խնայողություններն ու ներդրումները»:	
<input type="checkbox"/>	«Նույնիսկ ամենաերկար ճանապարհը սկսվում է առաջին քայլից»:	
<input type="checkbox"/>	«Եթե նախկինում սխալվել եմ և փողերս կորցրել, ապա դա չի նշանակում, որ միշտ այդպես է լինելու: Այժմ ավելի ուշադիր կլինեմ: Չէ՞ որ շատերն են ներդրումների շնորհիվ հարստանում»:	

Այսպես մտածելուց հետո մենք հավանաբար կդիմենք նաև գործնական քայլերի և առաջին հերթին կփնտրենք և կգտնենք խնայողություններ ու ներդրումներ կատարելու

համար մեզ խանգարող հիմնական պատճառները:

Ի՞նչ արժեն մեր երազները

Որքա՞ն գումար է անհրաժեշտ մեր նպատակների իրականացման համար

Եթե մենք չգիտենք, թե ուր ենք գնում, ապա կարող ենք շարժվել ցանկացած ուղղությամբ և հետո պարզել, որ հայտնվել ենք բոլորովին անցանկալի վայրում կամ վիճակում:



Ծիշտ ճանապարհ ընտրելու և ընթացքում այն վերահսկելու համար մենք պետք է հստակեցնենք մեր նպատակները, գնահատենք հնարավորությունները և պլանավորենք անելիքները: Այս տարրական սկզբունքը գործում է նաև խնայողությունների և ներդրումների աշխարհում: Ուստի, եկեք մտորենք, թե ինչ նպատակով են ընդհանրապես մարդիկ տնտեսում և ներդրումներ կատարում և ինչու համար է դա պետք մեզ: Եվ այսպես, եկեք, հստակեցնենք մեր նպատակները և պարզենք, թե «ինչ արժեն» մեր երազներն ու ապագայի պլանները: Մասնավորապես, որքան գումար է մեզ անհրաժեշտ հետևյալ խնդիրների լուծման համար՝

- Մեր կամ մեր երեխաների ուսման ծախսեր
- Տան, մեքենայի կամ կահույքի գնում
- Մեր կամ երեխաների ամուսնություն
- Հանգստի կամ շրջագայության կազմակերպում
- Անաշխատունակության, գործազրկության կամ բուժման խնդիրներ
- Ծնողների, երեխաների և այլ անաշխատունակ հարազատների խնամք
- Ծերության թոշակի անցում

Երևի համաձայն եք, որ այս խնդիրների մասին նախապես չմտածելը և լուծումներ չգտնելը նման է հայտնի թռչնի վարքագծին: Դրա պատճառով բոլորս լսում ենք բազմաթիվ պատմություններ, թե ինչպես սա կամ նա չկարողանալով լուծել «անսպասելի» ֆինանսական խնդիրները, «տոկոսի տակ ընկավ», «գործը, տունը կամ մեքենան կորցրեց», «ունեցվածքը ջրի գնով վաճառեց» և այլն: Նման պատմություններն անհամեմատ ավելի քիչ կլինեն, եթե ժամանակին հստակեցնենք մեր նպատակները, գնահատենք անհրաժեշտ ֆինանսական միջոցները և խնայողությունների կամ ներդրումների միջոցով կուտակենք անհրաժեշտ գումարները: Համաձայն եք, չէ՞, որ սա «տոկոսի տակ ընկնելուց» ավելի անցավ և արդյունավետ լուծում է: Այս ճանապարհով մենք անակնկալի չենք գա, նույն խնդիրների լուծման համար ավելի քիչ գումարներ կծախսենք և լրացուցիչ գումարներ կուտակելու հնարավորություն կունենանք:

«Ինչքա՞ն և ինչպե՞ս խնայել ու ներդնել» հարցերի պատասխանները, խնայողությունների և ներդրումների հնարավոր տարբերակներից մեր պահանջներին առավելագույնս համապատասխանողների ընտրությունը, ինչպես նաև ներդրումների պլանավորումն ու իրագործումն անմիջականորեն կախված են մեզանից ամեն մեկի անձնական հնարավորություններից, ներդրումային նպատակներից, մեր տարիքից, ռիսկերի դիմակայման ունակություններից և այլն:

Որպես օրինակ քննարկենք շատերիս առջև ծառայած մի քանի կարևորագույն խնդիրներ: Նախ, եկեք, դիտարկենք թոշակի անցնելու կամ առանց աշխատանքի մնալու հեռանկարը: Այս խնդրի լուծման համար միայն քչերն ունեն բավականաչափ միջոցներ, իսկ շատերս ստիպված ենք այդ միջոցները կուտակել բազմաթիվ տարիների ընթացքում: Դրա համար մենք նախ պետք է հստակեցնենք, թե քանի տարի հետո ենք պատրաստվում անցնել թոշակի և որքան փող ենք ուզում ունենալ թոշակի անցնելու ժամանակ:

Հետո պետք է հաշվենք, թե այդ նպատակով որքան փող պետք է տնտեսել և ներդնել յուրաքանչյուր ամիս կամ տարի: Վերը նշվածից հետո պետք է պարզենք, թե տնտեսելու և ներդրումներ կատարելու ինչ հնարավորություններ ու հեռանկարներ կան և թե ինչ ռիսկերի ենք պատրաստ



Ապագայի պլաններ, խնայողություններ և ներդրումներ – ուղեցույց

դիմակայել ներդրումներից ստացվող եկամուտներն առավելագույնի հասցնելու համար: Այս և հարակից հարցերին ճիշտ պատասխանելը, կենսաթոշակի կարիքների ճշգրտումը և խնայողությունների ու ներդրումների համապատասխան սխեմայի մշակումն ու իրագործումը կարող են էական նշանակություն ունենալ մեր հետագա ապահով ծերության համար: Զխորանալով այլևս ծերության անհատական տարաբնույթ պլաններ մշակելու մանրամասներում, նշենք ևս մի քանի լրացուցիչ փաստեր կենսաթոշակի պլանավորման կարևորության վերաբերյալ.

<input type="checkbox"/>	Բազմաթիվ ուսումնասիրությունների համաձայն կենսաթոշակի անցնելուց հետո նախկին կենսաձևը պահպանելու համար մեծամասնության համար ընդհանուր առմամբ պետք է նախկին տարեկան եկամտի մոտ 65-75 տոկոսը: Իսկ ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ կենսաթոշակը չպետք է աշխատավարձի 40 տոկոսից պակաս լինի:
<input type="checkbox"/>	Թոշակառուների մեծ մասը զգում են կենսաթոշակային խնայողությունների պակաս: Սոցիալական վճարները և կենսաթոշակը ծածկում են ապահովված թոշակառուներին անհրաժեշտ եկամտի միայն մի մասը: Մնացած մասը թոշակառուները լրացնում են իրենց անձնական խնայողությունների միջոցով:
<input type="checkbox"/>	Թոշակի անցնելուց հետո օգտագործման համար տնտեսված գումարները ծախսվում են տնտեսումից որոշակի տարիներ հետո, որի ընթացքում կյանքը թանկանում է, իսկ տնտեսած գումարների գնողունակությունը ընկնում:

Այժմ եկեք քննարկենք ուսման վարձերի խնդիրը: Այս խնդրի հետ առնչվողներից ոմանք զգացել են, թե ինչքան ծանր է, երբ ուսման վարձը չվճարելու համար սպառնում են երեխային հեռացնել ինստիտուտից, իսկ վճարելու համար տնտեսված գումար կամ հովանավոր չկա: Նման իրավիճակներից խուսափելու նպատակով կրթության համար անհրաժեշտ միջոցները ևս պետք է պլանավորվեն և կուտակվեն նախապես, հաշվի առնելով նաև, որ այդ միջոցները պետք են գալու որոշակի տարիներ հետո և ուսման վարձը պետք է բաշխվի ուսման տարիների միջև: Իսկ այդ ընթացքում հավանաբար ուսման վարձերն աճելու են, կուտակված գումարների գնողունակությունը նվազելու է և այլն: Այս հարցերը պարզելուց և պահանջվող գումարները հաշվարկելուց հետո միայն մենք կարող ենք որոշել, թե ինչպիսի խնայողությունների և ներդրումների միջոցով կարող ենք հասնել մեր այս նպատակին:

Ինչպես ցույց են տալիս քննարկված օրինակները, մեր նպատակների իրականացման ընթացքն ընդհանուր առմամբ բաղկացած է հետևյալ փուլերից.

- Նպատակների իրականացման ֆինանսական պլանի մշակում:**
- Խնայողությունների ու ներդրումների համապատասխան մարտավարության ընդունում:**
- Ներդրումային գործընթացի իրականացում և ընթացքի վերահսկում:**

Եթե ունենք բազմաթիվ խնդիրներ և նպատակներ, ապա ապագայի պլանավորման ժամանակ մեր նպատակներն ու ֆինանսական կարիքները պետք է դասակարգենք ըստ դրանց կարևորության, պահանջվող գումարների մեծության, ժամկետների և այլն:

Առանց վերը նշված քայլերի հնարավոր չէ որոշել խնայողությունների և ներդրումների այն տարբերակները, որոնք համապատասխանում են մեր նպատակներից յուրաքանչյուրին և դրանց հասնելու համար հատկացված ժամանակամիջոցներին:

«Մեր մաքուր արժեքը»

Ի՞նչ հնարավորություններ ունենք խնայողությունների և ներդրումների համար

Դնարավոր չէ որևէ ուղևորություն առանց որոշելու, թե որտեղից ենք սկսում այն:

Այս առումով բացառություն չէ նաև ներդրումային գործունեությունը, որից առաջ անհրաժեշտ է պարզել ոչ միայն մեր նպատակները, այլ նաև մեր ընթացիկ ֆինանսական վիճակը և հնարավորությունները:

Մեր ֆինանսական հնարավորությունների գնահատման համար անհրաժեշտ է հաշվել տվյալ ժամանակահատվածում մեր ֆինանսական մուտքերը (եկամուտները և ստանալիքները), ելքերը (ծախսերը և առկա պարտավորությունները), ինչպես նաև դրանց տարբերությունն ու տնտեսման հնարավորությունները:

Ֆինանսական վիճակի գնահատման տարածված չափանիշներից մեկը մեր «մաքուր արժեք»-ն է: Այն որոշելու համար ստորև բերված աղյուսակի առաջին սյունակում եկեք լրացնենք, թե ինչ ունենք: Դրանք կլինեն մեր ակտիվները կամ ունեցվածքը: Մյուս սյունակում եկեք զրեք մեր պարտքերը կամ պարտավորությունները:

Պետք չէ հուսահատվել, եթե մեր եկամուտների ու ծախսերի տարբերությունը կամ «մաքուր արժեքը» բացասական լինի: Դուրսագրվածքը նրանով, որ այդ մասին հիմա գոնե գիտենք և կփորձենք բարելավել իրավիճակը: Դա ևս առաջընթաց է, քանի որ

անորոշությունն ավելի է վատթարացնում մեր վիճակը:

Մեր ֆինանսական հնարավորությունների կամ «մաքուր արժեքի» որոշման բաղադրիչները				
Մեր ունեցվածքը		-	Մեր պարտավորությունները	
Կազմը	Ընթացիկ արժեքը, ՀՀ դրամ		Կազմը	Գումարը, ՀՀ դրամ
<ul style="list-style-type: none"> - Դրամական միջոցներ - Բանկային հաշիվների մնացորդներ - Խնայողություններ - Կատարված ապահովագրական մուծումներ - Ակնկալվող ստանալիքներ - Տուն և այլ անշարժ գույք - Ներդրումներ - Անձնական գույք - Այլ 			<ul style="list-style-type: none"> - Վարկային քարտեր - Բանկային վարկեր - Չվճարված գումարներ - Փոխառություններ - Պարտքեր - Այլ պարտավորություններ 	
Ընդամենը			Ընդամենը	

Առաջին անգամ մեր եկամուտների ու ծախսերի հաշվեկշիռն ու «մաքուր արժեքը» որոշելուց հետո լավ կլինի, որ այն պարբերաբար վերահաշվարկենք, որպեսզի հետևենք մեր առաջընթացին կամ մեր նպատակների ու հնարավորությունների համապատասխանության փոփոխմանը: Այդ ընթացքում, եթե մենք ունենանք մեծ ֆինանսական վիճակի բարելավման կամ ներդրումային պլան, ապա կոգնորվենք, երբ պարզենք, որ շարժվում ենք այդ պլանի համաձայն կամ շուտով մեր նպատակների իրականացման համար բավարար «մաքուր արժեք» ենք ունենալու:

Եկեք սկզբում վճարենք մեզ

խնայողություններն ու ներդրումները մեր ծախսերի առաջին շարքերում

Գաղտնիք չէ, որ շատերիս եկամուտներն ավելի փոքր են, քան անհրաժեշտ ծախսերը: Այս պայմաններում իրոք դժվար է միջոցներ գտնել տնտեսելու կամ ներդրումներ կատարելու համար:

Իսկ ինչ անել այդ դեպքում:

Մեր կարիքների բավարարման նպատակով ծախսվող յուրաքանչյուր լումա տնտեսելու փոխարեն պետք է սովորենք «սկզբում վճարել մեզ»: Այդ նպատակով պետք է մեր ծախսերի ցուցակը սկսենք «մեզ վճարվելիք գումարներից»:

Իսկ որո՞նք են «մեզ վճարվելիք գումարները»: Դրանք մեր հնարավոր խնայողություններն ու ներդրումներն են, որոնք պետք է լինեն առաջինները մեր ծախսերի շարքում: Այսինքն առաջինը մեր մասին պետք է հոգանք և մեզ վճարենք մինչև մեր վաստակած գումարների ծախսելն այլ նպատակների համար:

Իսկ դրա համար մեր ծախսերի ցուցակը պետք է սկսենք «խնայողություններ և ներդրումներ» հոդվածներով:

Ֆինանսական պլան				
Մեր եկամուտները		-	Մեր ծախսերը	
Կազմը	Գումարը, ՀՀ դրամ		Կազմը	Գումարը, ՀՀ դրամ
<ul style="list-style-type: none"> - Աշխատավարձ և այլ համարժեք վճարումներ - Թոշակ, նպաստ - Տոկոսներ բանկային ավանդներից - Տոկոսներ պարտատոմսերից - Եկամուտներ մասնավոր բիզնեսից - Դիվիդենդներ բաժնետոմսերից - Այլ եկամուտներ 			<ul style="list-style-type: none"> - <i>խնայողություններ</i> - <i>Ներդրումներ</i> - Բնակարանի վարձ - Կոմունալ ծախսեր - Հարկեր - Վարկերի սպասարկում - Սնունդ - Տրանսպորտային ծախսեր - Կենցաղային և այլ ապրանքներ - Կրթություն - Առողջություն և հանգիստ - Այլ ծախսեր 	
Ընդամենը			Ընդամենը	

Այո, մեզ կատարվող վճարումները մեր խնայողություններն ու ներդրումներն են, որոնք պետք է այսուհետ լինեն առաջինները մեր ծախսերի շարքում:

Բազմաթիվ մարդիկ, տարբեր երկրներում, տնտեսելու և ներդնելու սովորույթ ձեռք Ապագայի պլաններ, խնայողություններ և ներդրումներ – ուղեցույց

են բերում հետևելով «սկզբում միշտ վճարենք մեզ և մեր ընտանիքին» սկզբունքին: Առաջին հերթին մեզ վճարելու հոգեբանական և սովորույթի դժվարությունները հաղթահարելու նպատակով շատերը թույլ են տալիս, որ այդ նպատակով նախատեսված գումարն իրենց գործատուն, բանկը կամ հարազատը նախապես պարբերաբար առանձնացնեն վաստակից և ձևակերպեն խնայողական կամ ներդրումային հաշվի վրա: Այսպես վարվելով մենք ևս կարող ենք խուսափել «մեզ վճարելուց» առաջ մեր ամբողջ վաստակը այլ նպատակներով ծախսելուց և հնարավոր է, որ նույնիսկ չգգանք մեր ծախսերում այդ լրացուցիչ և ամենակարևոր հոդվածի ավելացումը:

Թաքնված հնարավորություններ

Ինչպե՞ս կրճատել առօրյա ծախսերն ու տնտեսել վաստակի մի մասը

Իսկ ի՞նչ անել, եթե մեր ծախսերի ու եկամուտների պլանավորման ընթացքում համոզվենք, որ ոչինչ չի մնում տնտեսելու և «առաջինը մեզ վճարելու» համար: Հուսահատվելու և ոչինչ չձեռնարկելու փոխարեն պետք է լրացուցիչ վաստակի աղբյուր գտնենք կամ ձգտենք կրճատել մեր առօրյա ծախսերն ու տնտեսել վաստակած գումարի մի մասը:

Ըստ էության տնտեսված գումարները նույնպես վաստակված գումարներ ու եկամուտներ են: Ի վերջո, ոչ թե մեր վաստակած, այլ տնտեսած գումարն է որոշում մեր կարողության չափը:

Ուստի, լրացուցիչ վաստակի խնդիրը չմոռանալով, փորձենք պարզել, թե առկա վաստակից ինչ որ բան տնտեսելու ինչպիսի հնարավորություններ ունենք: Ծախսերի պլանավորման և դրանց ուշադիր հետևելու դեպքում շատերիս հաճելի անակնկալ կմատուցի տնտեսելու «թաքնված» հնարավորությունների բացահայտումը:

Սակայն ինքնանպատակ և չպլանավորված տնտեսումը բավականին բարդ խնդիր է, առավել ևս եթե դժվարությամբ ենք «ծայրը ծայրին հասցնում»: Այդ պատճառով, վաստակածից ավելի քիչ ծախսելու և վաստակի մի մասը տնտեսելու համար պետք է լինենք կարգապահ, տնտեսումը դարձնենք պլանավորված գործընթաց կամ ամենօրյա սովորություն և փորձենք հետևել ծախսերը սահմանափակող ստորև ներկայացվող և այլ որոշակի օգտակար խորհուրդների:



<input type="checkbox"/>	Չվերցնել պարտք կենցաղային ապրանքների գնումների և ընթացիկ ծախսերի համար	!
<input type="checkbox"/>	Պարբերաբար պլանավորել բոլոր ծախսերը	
<input type="checkbox"/>	Գրանցել և համեմատել պլանի հետ փաստացի ծախսերը	
<input type="checkbox"/>	Խուսափել կյանքի մակարդակի վրա չազդող ծախսերից	
<input type="checkbox"/>	Խուսափել որևէ նպատակով տնտեսված գումարն այլ նպատակով ծախսելուց	
<input type="checkbox"/>	Գնել զեղչով վաճառվող կամ համեմատաբար էժան, սակայն համարժեք որակի իրեր	
<input type="checkbox"/>	Խուսափել առանց հիմնավոր պատճառների մոր և ոչ կարևոր իրեր գնելուց	
<input type="checkbox"/>	Տնտեսել և կուտակել գնումների ժամանակ հետ ստացված մանրը	
<input type="checkbox"/>	Հրաժարվել ծախսեր պահանջող վնասակար սովորույթներից և այլն	

Այժմ փորձենք ճշտել այս խորհուրդների գործնական կիրառելիությունը, օգտակարությունն ու արդյունավետությունը: Նախ պարզենք, թե ամենօրյա ոչ կարևոր և վնասակար քմահաճույքները որքան են ավելացնում մեր ծախսերը: Առաջին հերթին հենց այդ ծախսերը մենք պետք է կրճատենք և տնտեսված միջոցներն ուղղենք դեպի խնայողություններն ու ներդրումները:

Ծախսեր պահանջող վնասակար սովորույթներ

Եկեք դիտարկենք մեր առողջության համար վնասակար որոշ սովորույթների ազդեցությունը մեր ներդրումային հնարավորությունների սահմանափակման վրա: Այսպես, եկեք, խնայողությունների տեսանկյունից ճշգրտենք, թե ինչ արժի օրական մեկ կամ երկու տոբլի սիգարետը: Եթե ամեն օր 600 դրամով (մոտ 2 դոլար) գնում ենք մեկ կամ երկու տոբլի սիգարետ, ապա մեկ տարվա ընթացքում ծխելու համար ծախսում ենք 220 հազար դրամ: Եթե մենք խնայենք մեր առողջությունը և ընդամենը մեկ տարի չծխենք, ապա ընդամենը

մեկ տարվա ընթացքում զուգահեռաբար կտնտեսենք 220 հազար դրամ: 10 տոկոսով ներդրված այդ 220 հազար դրամը 7 տարի հետո կդառնա մոտ 450 հազար դրամ, որը կարող ենք օգտագործել բազմաթիվ խնդիրների լուծման համար:

Այսպիսով, եթե հետևենք մեր ծախսերին և գտնենք ընթացիկ ծախսերի նվազեցման ուղիներ, ապա կարող ենք զգալիորեն բարելավել մեր բարեկեցությունը և ֆինանսական հնարավորությունները: Եթե անգամ մեկ կամ երկու տուփ սիգարետը կարող է այդքան մեծ արդյունք տալ, ուրեմն պետք է փորձել գտնել քիչ ծախսելու և ներդրումներ կատարելու լրացուցիչ այլ միջոցներ ևս:

Պարտքով կամ ապահով գնումներ

Այժմ եկեք քննարկենք պարտքով ապրանքների գնելու սովորույթը, որի պատճառով մենք ակամա ավելի շատ ենք վճարում նույն ապրանքի համար:

Այսպես, եթե պարտքով գնում ենք 100 հազար դրամ (մոտ 330 դոլար) արժողությամբ հեռուստացույց և գումարը վճարում ենք երկու տարում 18% կուտակվող տոկոսավճարով, ապա հեռուստացույցի համար մենք փաստորեն վճարում ենք ավելի քան 150 հազար դրամ (մոտ 500 դոլար):

Ոչ առաջին անհրաժեշտության կամ հանկարծակի գնումներ

Այժմ քննարկենք ոչ առաջին անհրաժեշտության ապրանքների կամ չպլանավորված հանկարծակի գնումների խնդիրը:

Սովորաբար, խաղալիքներ, մոդայիկ հագուստ և ոչ առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ գնելիս մենք չենք մտածում, թե արդյոք հիմա իրականում դրանց կարիքն ունենք, կամ ինչ կարծե՞նան դրանք մի քանի տարի անց և ներդրումների դեպքում ինչքան կաճե՞ին տվյալ պահին գնումների վրա ծախսված գումարները: Մինչդեռ, եթե ոչ հրատապ և խիստ անհրաժեշտ գնումներից խուսափելու շնորհիվ «մի կողմ դրված» գումարը ներդնենք ասենք տարեկան մոտ 10 տոկոսով, ապա մոտ 7 տարի հետո այն կկրկնապատկվի և ավելի շատ ապրանքներ գնելու հնարավորություն կտա մեզ: Այսպես վարվելու համար լավ կլինի, որ մենք յուրաքանչյուր գնումից առաջ մտածենք դրա անհրաժեշտության և հրատապության մասին:

Զպլանավորված և ոչ անհրաժեշտ գնումներ կատարելու հանկարծակի ցանկության դեպքում դրանք պետք է հետաձգենք առնվազն մեկ օր, որից հետո սովորաբար այլևս չենք ցանկանա նույն գնումը կատարել:

Ամփոփելով ծախսերի կրճատման առնչվող խորհուրդները, ավելացնենք, որ այս հարցում պետք է նաև որոշակի խոհեմություն ու ճկունություն ցուցաբերել և չընկնել չափազանցությունների մեջ: Մասնավորապես, պետք է հիշել, որ եթե մենք մեկ ամիս շարունակ ուտում ենք միայն բրինձ, ապա կամ չափազանց շատ ենք տնտեսում կամ առայժմ ի վիճակի չենք «վճարել մեզ»:

Տնտեսելու մեր հնարավորությունները պարզելուց և որոշակի գումար տնտեսելուց հետո, որպեսզի չվերածվենք խաբված ներդրողների, եկեք պարզենք, թե ինչպես պետք է «աշխատեցնել» տնտեսված փողը ներդրումների ու խնայողությունների աշխարհում, թե ինչով է պայմանավորված այդ աշխատանքի արդյունավետությունը և որոնք են ներդրումներ կատարողու գործիքների և եղանակների ընտրության հնարավորությունները:

Փողի ժամանակային արժեքը

ժամանակն ու արժեզրկումը չաշխատող գումարների հիմնական թշնամիներն են

Այդ նպատակով նախ եկեք պարզենք, թե ինչ է փողի ժամանակային արժեքը: Արդյո՞ք 1000 դրամը միշտ արժի 1000 դրամ: Կամ թեկուզ մեկ դոլարը և եվրոն, միշտ արժե՞ն մեկ դոլար կամ մեկ եվրո: Սա շատ պարզ և բոլորիս համար կարևոր հարց է: Անշուշտ, միշտ չէ, որ 1000 դրամն արժի 1000 դրամ: Շատ ավելի հաժախ 1000 դրամն ունի 910, 1090 դրամի կամ այլ արժեքներ: Ինչպե՞ս կարող է դա պատահել: Օրինակ, արդար կլինի՞, եթե մենք մեր 1000 դրամանոց թղթադրամի դիմաց ստանանք 910 կամ 1090 դրամ:



Իրոք, փողի արժեքը մշտապես փոփոխվում է: Փողի ժամանակային արժեքի վրա մշտապես ազդող ամենակարևոր գործոնները փողի «աշխատել-չաշխատել» ու արժեզրկումն են, որոնք խստորեն ազդում են փողի ընթացիկ գնողունակության վրա: Այս պատճառով, եթե մեզ «առանց տոկոսի» պարտք են, ասենք 1000 դրամ, ապա մենք ձգտում

ենք, որ այն վերադարձվի ոչ թե մեկ տարի հետո, այլ այսօր: Բուրիս համար նման վարձուների հիմնական պատճառներից մեկն այն իրողության գիտակցումն է, որ փողի գնողունակության նվազման պատճառով մեկ տարի հետո նույն փողի արժեքը ավելի ցածր կլինի այսօրվա արժեքից: Տարբեր արագությամբ և օրինաչափություններով արժեզրկվում են ինչպես դրամը, այնպես էլ դոլարը, եվրոն և մյուս դրամական միավորները:

Եթե դոլարի ինֆլյացիան կազմում է, ենթադրենք, տարեկան 3 տոկոս (2007թ. դոլարի միջին տարեկան ինֆլյացիան ԱՄՆ-ում), ապա դա նշանակում է, որ մեկ տարվա ընթացքում գները դոլարով միջին հաշվով աճում են 3 տոկոսով: Այսինքն, մեկ տարի հետո դոլարի գնողունակությունը 3 տոկոսով ցածր կլինի և այսօրվա մեկ դոլարը կունենա 97 ցենտի արժեք: Ուրեմն, չնայած մենք ստանում ենք անվանական նույն գումարը, բայց կորցնում ենք առնվազն 3 ցենտ կամ կրում 3 տոկոսի վնաս, հաշվի չառնելով նույնիսկ այդ գումարի նախապես ստանալու և ներդնելու դեպքում հնարավոր հավելյալ եկամուտների կորուստը:

Իսկ մեր դրամը՝ Ընդհանուր առմամբ դրամի արժեզրկումն այժմ համեմատաբար ավելի մեծ է, սակայն գործում են նույն օրինաչափությունները: Եթե դրամի արժեզրկումը նույն ժամանակահատվածում կազմում է տարեկան ասենք 7 տոկոս (2007թ. դրամի մոտավոր միջին տարեկան ինֆլյացիան), ուրեմն մեկ տարվա ընթացքում գները դրամով միջին հաշվով կաճեն 7 տոկոսով: Այսինքն, մեկ տարի հետո դրամի գնողունակությունը 7 տոկոսով ցածր կլինի և այսօրվա 1000 դրամը կարժենա 930 դրամ: Այսինքն, մենք կորցնում ենք առնվազն 70 դրամ կամ կրում 7 տոկոսի վնաս, հաշվի չառնելով անգամ գումարի նախապես ստանալու և ներդնելու հնարավոր եկամուտների կորուստը:

Տվյալ դեպքում դոլարի ու դրամի արժեզրկումների տարբերությունը կազմող 4 տոկոսը դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքի փոփոխությունը պայմանավորող գործոններից մեկն է միայն: Այդ է պատճառը նաև այն փաստի, որ չնայած 2007թ. ընթացքում դոլարի համեմատ դրամի հավելյալ 4 տոկոս տարեկան ինֆլյացիայի առկայությանը, դրամը դոլարի նկատմամբ արժեզրկվել է շուրջ 17 տոկոսով: Սակայն, այժմ, չխորանալով դրամ/դոլար փոխարժեքի ձևավորման և դրամի արժեզրկման խնդիրներում, շարունակենք փողի ապագա և ներկա արժեքների տարբերության քննարկումը:

Ի վերջո, ի՞նչ տեղի կունենա, եթե մենք այսօր հետ ստանանք և ներդնենք մեր գումարը: Մեկ դոլարը հետ ստանալու և տարեկան 10 տոկոսով ներդնելու դեպքում տարվա վերջում կունենանք մեկ դոլար տասը ցենտ, այսինքն կստանանք 10 տոկոսով ավել գումար: Հաշվի առնելով նաև դոլարի 3 տոկոս արժեզրկումը, մեր տարեկան եկամուտը կլինի 7 ցենտ մեկ դոլարից կամ 7 տոկոս: Իսկ ի՞նչ կլինի դրամի դեպքում: 1000 դրամը տարեկան 10 տոկոսով ներդնելու դեպքում (ինչը փաստացի այժմ հնարավոր է Հայաստանի ֆինանսական շուկայում) մեկ տարի հետո կունենանք 1100 դրամ: Հաշվի առնելով նաև դրամի 7 տոկոս արժեզրկման ազդեցությունը, մեր տարեկան մաքուր եկամուտը կլինի 3 տոկոս: Այսինքն մեր այսօրվա ներդրված 1000 դրամի արժեքը մեկ տարի հետո կլինի 1030 դրամ:

Եկեք փողի արժեզրկման ժամանակային ազդեցության քննարկումն ավարտենք հետևյալ օրինակով: Ենթադրենք, երկու եղբայրներից ավագը թոշակի է գնալու 5 տարի, իսկ կրտսերը՝ 10 տարի հետո: Նրանցից յուրաքանչյուրը, թոշակի գնալու համար, «հետ է զգել» և ուզում է մինչև թոշակի գնալը տանը պահել միաժամանակ 1,000 դոլար և 300 հազար դրամ: Այժմ եկեք պարզենք, թե ինչ կարծենան նրանցից յուրաքանչյուրի 1,000 դոլարն ու 300 հազար դրամը թոշակի գնալու ժամանակ, եթե այդ տարիների ընթացքում դոլարի արժեզրկումը կազմել է տարեկան միջինը 3 տոկոս, իսկ դրամինը՝ տարեկան միջինը 7 տոկոս: Հինգ տարի հետո ավագ եղբայրը թոշակի գնալիս կպարզի, որ տանը պահած իր 1000 դոլարն այժմ ունի 5 տարի առաջվա 860 դոլարի «ուժը», իսկ 300 հազար դրամը՝ 209 հազար դրամի «ուժը»: Կրտսեր եղբայրը, եթե հետևություն չանի և շարունակի գումարները տանը պահել, ապա դրանից ևս հինգ տարի հետո թոշակի գնալիս կպարզի, որ 10 տարի առաջ տանը պահած իր 1,000 դոլարն ունի նախկին 737 դոլարի «ուժը», իսկ 300 հազար դրամը՝ նախկին 145 հազար դրամի «ուժը»:

Այժմ, նախքան ներդրումների աշխարհում մեր դիտարկումների և բացահայտումների շարունակումը, եկեք ամփոփենք և ձևակերպենք փողի արժեզրկմանը և ժամանակային արժեքին առնչվող մի քանօրի գործնական հետևություններ.

- Խնայված ու տնտեսված գումարները չի կարելի առանց աշխատեցնելու պահել տանը կամ թաքցնել ինչ որ տեղ
- Առանց աշխատեցնելու պահվող գումարները արժեզրկման պատճառով պակասում և կորցնում են իրենց «ուժը»
- Ժամանակն ու արժեզրկումը միմյանց դաշնակիցներ են որպես չափատող գումարների հիմնական թշնամիներ
- Արժեզրկումից խուսափելու և «փողն աճեցնելու» համար տնտեսված գումարները պետք է «աշխատեցնել»

Երկարաժամկետ ներդրումները և հավելյալ տոկոսների «հրաշքը»

«Տոկոսի տոկոսը», կամ ի՞նչ ժամկետում են կրկնապատկվում մեր ներդրումները

Եկամուտը և շահույթը փողի «աշխատանքի» արդյունքների գնահատման հիմնական ընդհանրացված չափանիշներն են, անկախ փողի «աշխատանքի» կամ ներդրման եղանակից:
Համապատասխանաբար, եկամտաբերությունը և շահութաբերությունը (շահատոկոս, տոկոս) փողի «աշխատանքի» արդյունավետության գնահատման հիմնական ընդհանրացված չափանիշներն են:



Եկեք պարզաբանենք մշված չափանիշների իմաստն օրինակի օգնությամբ:

Այսպես, եթե արժեթղթերում ներդրված մեր 1,000 դրամը մեկ տարվա «աշխատանքի» արդյունքում դարձել է 1,200 դրամ, ապա մեր ստացած ընդհանուր եկամուտը 1,200 դրամն է, իսկ շահույթը կամ շահը՝ 200 դրամը:

Այսբանը բոլորս գիտենք և ձգտում ենք որևէ կարճաժամկետ ներդրում կատարելու դեպքում ներդրումների դիմաց ստացվող շահույթն առավելագույնի հասցնել: Սակայն, շատերիս համար հայտնի մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, քչերն են երկարաժամկետ ներդրումներ կատարում և ընկալում դրա առանձնահատկություններն ու հավելյալ հնարավորությունները:

Այդ պատճառների թվում ամենակարևորներից մեկն այն է, որ շատերս հստակ չգիտենք, թե ինչ է բարդ, բաղադրյալ, հավելյալ կամ կուտակվող տոկոսը և ինչ «հրաշքեր» է այն գործում երկարաժամկետ ներդրումների դեպքում: Շատերս կարծում ենք, որ եթե, ենթադրենք, 1,000 դրամ 10 տարով ներդնենք տարեկան 12 տոկոս շահութաբերություն և 10 տարվա շահույթը կլինի ընդամենը 1,200 դրամ: Այսպես մտածելով, շատերս խուսափում ենք երկարաժամկետ ներդրումներից, հուսալով, որ այդ ընթացքում հավանաբար ավելի շահութաբեր կարճաժամկետ ներդրումների հնարավորություններ կլինեն:

Այս սխալ պատկերացմանը վերջ տալու համար եկեք բացահայտենք բարդ, բաղադրյալ, հավելյալ կամ կուտակվող տոկոսների «հրաշքը»:

Ալբերտ Էյնշտեյնն ասել է՝ «Բաղադրյալ տոկոսները մարդկության ամենամեծ հայտնագործությունն են, քանի որ թույլ են տալիս հուսալիորեն և սխտեմատիկորեն հարստություն կուտակել»:

Իրականում, այս «հրաշքի» էությունը շատ պարզ է և կայանում է նրանում, որ ներդրման յուրաքանչյուր ժամանակահատվածի (մասնավորապես, ամսվա կամ տարվա) վերջում առաջացած շահույթն ինքը՝ ներդրված մայր գումարի հետ միասին, հաջորդ փուլում ներդրողին լրացուցիչ շահույթ է բերում:

Երբ տարեկան 10 տոկոսով ներդնում ենք 1000 դրամ, ապա առաջին տարվա վերջին այդ գումարը կկազմի 1100 դրամ: Երկրորդ տարվա վերջում կունենանք ոչ թե 1200, այլ 1210 դրամ: Եվ այդ 10 դրամն էլ հենց հավելյալ տոկոսն է կամ տոկոսի վրա եկած հավելյալ եկամուտը:

Շատերը կասեն, որ սա մեր իմացած տոկոսի տոկոսն է: Իրոք, սա մեր լսած, իմացած, բայց չօգտագործած տոկոսի տոկոսն է:

Եթե օգտագործեինք այդ «տոկոսի տոկոսը», ապա նախորդ օրինակում տարեկան 12 տոկոսով ներդրված 1000 դրամը 10 տարի հետո կդառնար ոչ թե 2,200, այլ 3,106 դրամ: Այսինքն, ներդրման միջին տարեկան շահութաբերությունը կկազմի ոչ թե 12, այլ 21.6 տոկոս: 20 տարի հետո մեր ներդրած գումարը կլինի ոչ թե 3,400 (1,000+20x120) այլ 9,646 դրամ, իսկ միջին տարեկան շահութաբերությունը կկազմի 86 տոկոս:

Այս օրինակից անգամ երևում է, որ փողի երկարատև ներդրումների դեպքում ժամանակը դառնում է մեր դաշնակիցը և տարիների ընթացքում մեր եկամուտները «սկսում են աճել սնկերի նման»: Եթե մենք երկարացնենք ներդրման ժամկետները կամ կարողանանք բարձրացնել տոկոսադրույթը, ապա մեր եկամուտները կաճեն բազմապատկված արագությամբ: Ստորև բերված աղյուսակում ցույց է տրվում, թե ներդրված յուրաքանչյուր 1000 դրամը հավելյալ տոկոսների շնորհիվ որքան է դառնում ներդրման տարբեր տոկոսադրույթների ու տարիների դեպքերում:

Հիմա երկի չենք զարմանա, եթե իմանանք, որ ինչ-որ մեկը ներդրումների շնորհիվ կրկնապատկել է իր գումարը 6 կամ 12 տարվա ընթացքում: Դրա համար բաղադրյալ տոկոսներից բացի պետք է հիշել նաև «72-ի կանոնը»: Այն ցույց է տալիս, թե քանի՞ տարվա ընթացքում է մեր փողը կրկնապատկվում տարբեր տոկոսների դեպքում: Պարզապես պետք է 72-ը բաժանել մեր ներդրման տարեկան շահութաբերության վրա: Օրինակ, 12 տարվա ընթացքում գումարը կկրկնապատկվի ընդամենը 6 տոկոսի դեպքում, իսկ 12 տոկոսի դեպքում՝ գումարը կկրկնապատկվի ընդամենը 6 տարում:

Կարելի է անսպառ օրինակներ բերել բաղադրյալ տոկոսների մասին: Սակայն դրանցից բխող գլխավոր հետևությունն այն է՝ որ պետք է խելամտորեն տնտեսել և հնարավորին չափ շուտ երկարաժամկետ ներդրումներ կատարել:

Միանվագ երկարաժամկետ ներդրումներից ստացվող եկամուտները տարբեր տոկոսների դեպքում

Ներդրման տևողությունը	1,000 դրամ միանվագ ներդրման արդյունքում ստացված ընդհանուր եկամուտը ներդրման տարբեր տոկոսների դեպքում (դրամ)			
	5 տոկոս	10 տոկոս	15 տոկոս	20 տոկոս
5	1,276	1,611	2,011	2,488
10	1,629	2,594	4,046	6,192
15	2,079	4,177	8,137	15,407
20	2,653	6,727	16,367	38,338
25	3,386	10,835	32,919	95,396
35	5,516	28,102	133,176	590,668
45	8,985	72,890	538,769	3,657,262
50	11,467	117,391	1,083,657	9,100,438

Անուիտետային երկարաժամկետ ներդրումներից ստացվող եկամուտները տարբեր տոկոսների դեպքում

Ներդրման տևողությունը	1,000 դրամ ներդրման և 1,000 դրամ տարեկան ավելացումների արդյունքում ստացված ընդհանուր եկամուտը ներդրման տարբեր տոկոսների դեպքում (դրամ)			
	5 տոկոս	10 տոկոս	15 տոկոս	20 տոկոս
5	5,802	6,716	7,754	8,930
10	13,207	17,531	23,349	31,150
15	22,657	34,950	54,717	86,442
20	34,719	63,002	117,810	224,026
25	50,113	108,182	244,712	566,377
35	94,836	298,127	1,013,346	3,538,009
45	167,685	790,795	4,122,898	21,937,572
50	219,815	1,280,299	8,300,374	54,596,629

Հապաղման կամ հետաձգման գինը

Ներդրումների հետաձգումներն աններելիորեն մեծացնում են մեր ծախսերը

Ներդրումներ չկատարելուց հետո մեր երկրորդ կարևորագույն սխալը հետաձգումը կամ հապաղումն է:

Ինչպես արդեն համոզվեցինք, որքան ուշ ենք սկսում ներդրումներ կատարելը, այնքան ավելի շատ գումար ենք ծախսում մեր նպատակների իրագործման համար: Մեկ անգամ ևս սրանում համոզվելու համար քննարկենք ուղղակի մեկ օրինակ.

Ենթադրենք 25 ամյա Անդրանիկը ցանկանում է 60 տարեկանում թոշակի անցնել և այդ ժամանակ ունենալ 5 միլիոն դրամ: Դրա համար նրան անհրաժեշտ է տարեկան 10 տոկոսով 35 տարի շարունակ ամսական ներդնել 1310 դրամ՝ ներդնելով ընդամենը մոտ կես միլիոն դրամ: Եթե նա իր ներդրումները սկսի 35 տարեկանից, ապա անհրաժեշտ ամսական ներդրումները կկազմեն 3,740 դրամ, իսկ ներդրվող ընդհանուր գումարը առնվազն կկրկնապատկվի: Եթե նա սկսի ներդրումներ կատարել 40 տարեկան դառնալուց հետո, ապա ամսական ներդրումները կմեծանան հինգ անգամ՝ հասնելով 6,530 դրամի, իսկ ներդրվելիք ողջ գումարը կգերազանցի մեկ ու կես միլիոնը:

Մեր պայմաններում սա կարծես թե նույնիսկ բավարար է, որ քիչ թե շատ հանգիստ վերաբերվենք նույնիսկ կենսաթոշակի անցնելու հեռանկարին:

Կորուստներ և փաստացի եկամուտներ

Անարդյունավետ ներդրումները, հարկերը և արժեթղթերում նվազեցում են մեր փաստացի եկամուտները

Ներդրումների տարեկան միջին շահութաբերությունն արժեթղթերի շուկաներում երկար տարիներ եղել է 10 -12 տոկոսից ոչ պակաս: Ուստի, եթե մեր ներդրումները կրկնապատկվել են 10-15 տարվա ընթացքում, ապա մենք փաստորեն արդյունավետ ներդրում չենք կատարել և միջին շուկայականից կրկնակի անգամ քիչ եկամուտ ենք ստացել:



Այո, ներդրումային կարևորագույն գաղտնիքներից մեկը կայանում է նրանում, որ կարողանանք այնպիսի ներդրումներ կատարել, որպեսզի միջին շուկայականից ավելի մեծ եկամուտ ստանանք:

Այժմ պարզենք, թե միջին շուկայականից ավելի մեծ եկամտաբերություն խոստացող ներդրումային հնարավորություն փնտրելուց բացի, ինչ այլ հանգամանքներ ենք պարտավոր հաշվի առնել ներդրումներ կատարելիս:

Ենթադրենք, մեկ տարում որևէ ընկերության բաժնետոմսերից ստացել ենք 12 տոկոս եկամուտ: Արդյո՞ք այդ 12 տոկոսը մեր վերջնական փաստացի եկամուտն է: Այո, հարցին պատասխանելու համար մենք պետք է տարբերակենք նախ մեր հաշվարկային, ընդհանուր և փաստացի եկամուտները և ճշտենք, թե որքան է կազմում մեր փաստացի եկամուտը յուրաքանչյուր ներդրումից:

Ամենակարևոր գործոններից մեկը, որը մենք անտեսում ենք մեր փաստացի եկամուտների հաշվարկի ժամանակ, դա ստացվող եկամուտներից վճարվելիք հարկերն են: Ներդրում կատարելուց առաջ պետք է նախ պարզել, թե ինչպես են հարկվում ֆինանսական տարրեր գործիքներում կատարված ներդրումներից ստացված եկամուտները:

Օրինակ, 12 տոկոս եկամուտ ապահոված բաժնետոմսերից մեր փաստացի եկամուտը 20 տոկոս եկամտահարկի դեպքում կկազմի ընդամենը 9.6 տոկոս: Այսինքն, եթե մենք գումարը ներդրած լինեինք 10 տոկոս եկամուտ ապահովող, բայց չհարկվող որևէ պետական պարտատոմսում, ապա կստանայինք 0.4 տոկոսով ավելի մեծ փաստացի եկամուտ:

Այսպիսով, ներդրումային գործիքների վերջնական ընտրության համար մենք պետք է հաշվի առնենք տարբեր ներդրումներից ստացված եկամուտներից գանձվող հարկերը և գնահատենք մեր փաստացի եկամուտները հարկումից հետո: Այս առումով մենք մասնավորապես պետք է իմանանք, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ զգալի արտոնություններ է նախատեսվում արժեթղթերում ներդրումներից ստացված եկամուտների հարկման համար:

Օրինակ, ֆիզիկական անձանց կողմից գանձապետական պարտատոմսերից ու պետական այլ արժեթղթերից ստացվող տոկոսները և մարելու ժամանակ զեղչի ձևով ստացվող եկամուտները, ինչպես նաև բաժնետոմսերից ստացած շահաբաժինները և բաժնետոմսերի օտարումից, փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտները հարկվում են 0% եկամտահարկի դրույքաչափով: Ֆիզիկական անձանց ոչ պետական պարտատոմսերից ստացվող տոկոսները և զեղչի ձևով եկամուտները, ինչպես նաև պարտատոմսերի օտարումից ստացվող եկամուտները ենթակա են հարկման 10% եկամտահարկի դրույքաչափով:

Ստորև ամփոփ տեսքով ներկայացված են արժեթղթերում ներդրումներից իրականացվող հարկումները ֆիզիկական և իրավաբանական անձանց համար

Հայաստանի Հանրապետությունում արժեթղթերում ներդրումներից ստացված եկամուտների հարկման տեկոսադրույքները				
Ստացված եկամտի աղբյուրը	Ֆիզիկական անձանց համար		Իրավաբանական ան անձանց համար	
	Արժեքի հավելված	Տոկոսային եկամուտ/ Շահութաբաժին	Արժեքի հավելված	Տոկոսային եկամուտ/ Շահութաբաժին
Պետական պարտատոմսերից ստացվող եկամուտներից	0%	0%	20%	20%
Բաժնետոմսերից ստացվող եկամուտներից	0%	0%	20%	0%
Կորպորատիվ պարտատոմսերից ստացվող եկամուտներից	10%	10%	20%	20%

Այսպիսով, արժեթղթերում կատարվող ներդրումների բերած եկամուտները նաև կարող են չհարկվել: Սա ևս մեկ լրացուցիչ փաստարկ է նմանատիպ ներդրումների իրականացման համար, քանի որ հավասար հաշվարկային եկամտաբերության դեպքում մենք արժեթղթերում ներդրումներից կարող ենք ունենալ ավելի մեծ փաստացի եկամուտներ:

Ամեն դեպքում կարևորն այն է, թե փաստացի որքան գումար է մեզ մնում վերջում:

Մեր փաստացի եկամուտների վրա ազդող մյուս կարևորագույն գործոնն արժեզրկումն է: Եթե վերը բերված օրինակում ներդրումներից ստացված մեր եկամուտը հարկումից հետո կազում է 9.6 տոկոս, իսկ գումարի գնողունակությունը նվազեցնող արժեզրկումը կազմում է 3 տոկոսով, ապա մեր փաստացի եկամուտը դառնում է ընդամենը 6.6 տոկոս:

Այսպիսով, ճիշտ ներդրումային որոշում կայացնելու, արդյունավետ ներդրումներ կատարելու և փաստացի եկամուտները հաշվարկելու համար, մենք պետք է հստակ տեղեկատվություն ու պատկերացում ունենանք ներդրումային տարբեր գործիքներում ներդրումների միջին տարեկան տոկոսադրույքների, ներդրումների հարկման առանձնահատկությունների ու արժեզրկման ցուցանիշների մասին և դրանց հիման վրա հաշվենք մեր վերջնական փաստացի եկամուտները:

Խաղամոլություն՞ն, թե ներդրումներ

Ինչու՞ ենք շատերս ներդրումներ կատարելու փոխարեն վիճակախաղի տոմսեր գնում

Հնարավոր է, որ մեզանից մեկը շահի կազինոյում, մեկ ուրիշի բախտը բերի վիճակախաղում կամ լոտոյում և այլն: Այսպիսի դեպքերի մասին հիշելով կամ լսելով, երբեմն մտածում ենք, թե ինչ կարիք կա փողը ներդնելու դանդաղ գործող ինչ-որ ներդրումային գործիքներում: Չէ՞ որ դրանք տարիների ընթացքում խոստանում են ընդամենը երկնիչ եկամուտներ, այն դեպքում, երբ կազինոյում կամ վիճակախաղի միջոցով կարելի է կայծակնային արագությամբ ձեռք բերել մի ամբողջ կարողություն: Իրոք, անգամ երկարատև ներդրումների և հավելյալ տոկոսների կուտակման դեպքում, մեր ներդրած գումարները կրկնապատկվեն տարիների ընթացքում: Իսկ եթե մենք ցանկանում ենք մեծ գումարներ՞ ու միանգամի՞ց:



Ցավոք, այսպիսի մտորումների ժամանակ մենք չենք մտածում, որ գուշակությունները, խաղամոլությունն ու բախտի քմահաճույքներից ապավինելը մշտական և հարատև հաջողություն չեն ապահովում: Չենք հիշում նաև, թե ինչպես են մեզանից շատե՛ր կորցրել իրենց խնայողությունները խելացնոր տոկոսներ առաջարկող կեղծ ֆինանսական կառույցներում, կասկածելի վիճակախաղերում ու գործարքներում, կամ ինչպիսի փորձություններով են անցել ոմանք որոշ կեղծ «լոտոներից» ու «վիճակախաղերից» շահած իրերը կամ գումարները ստանալիս:

Վերհիշենք, օրինակ, հետխորհրդային տարիների որոշ կեղծ «ֆինանսական կառույցներում» ներդրած ու կորցրած մեր խնայողությունները: Լուրջ ու վստահելի բանկերի հավասարակշռված առաջարկությունները թողած, պաշարել էինք ինչ-որ կասկածելի կազմակերպություններ: Անգամ ծանոթներ էինք փնտրում մեր գումարներն ինչ որ հրաշագործների հանձնելու համար: Ինչու՞: Որովհետև, մեզ անհամեմատ բարձր եկամուտներ էին խոստանում, քան առաջարկում և ապահովում էին օրինական գործունեությամբ զբաղվող բանկերը: Իսկ մենք մեզ նեղություն չէինք տալիս պարզելու, թե ինչ կազմակերպություն են այդ ոսկե անձրև առաջարկող «բանկը կամ ինվեստը», ովքեր են հիմնադրել, ինչով են զբաղվում, ունեն արդյոք արտոնագրեր, ինչ եկամուտներ ունեն, օրինական են արդյոք եկամտի աղբյուրները, չունեն արդյոք խնդիրներ օրենքի և հաճախորդների հետ և այլն:

Իսկ ինչու՞ նեղություն չէինք տալիս մեզ: Որովհետև շատերս չենք սիրում «դանդաղ և անդադար մեզ համար աշխատող» ներդրումներ կատարել, չենք սիրում սպասել, որ մեր եկամուտներն աճեն «կամաց կամաց», չենք սիրում օրինական ճանապարհով մեր իրավունքներին հետամուտ լինել և այլն: Իսկ այս ամենը չենք սիրում, որովհետև հստակ պատկերացում չունենալով ներդրումների հնարավորությունների ու առանձնահատկությունների մասին, սովորաբար ձգտում ենք «գոլ խփել» և չենք համակերպվում այն իրողության հետ, որ տարաբնույթ արկածների արդյունքում հազվադեպ են իրականանում մեր ցանկությունները:

Վերը նշվածների պատճառով, մեզանից ոմանք դարձել են տարաբնույթ վիճակախաղերի տոմսեր գնողներ և «լոտո ջնջողներ», անտեսելով, որ տարբեր խաղերում օգտագործվող յուրաքանչյուր դրամը հենց այն դրամն է, որն այլևս չի ներդրվելու, այսինքն հետագայում չի «աշխատելու» և լրացուցիչ եկամուտներ չի բերելու մեզ:

Տխուր հիշողությունները շարունակելու փոխարեն այժմ եկեք համեմատենք մեր գումարներն «աշխատեցնելու» այս այլընտրանքային հնարավորությունները:

Նախ, եկեք ճշտենք, թե ինչպիսին է կազմնայում, վիճակախաղում կամ լոտոյում շահելու հնարավորությունը: Առավելագույնը, որ կարող ենք ասել, այն է, որ դա կախված է մի շարք պայմաններից և կարող է լինել, ասենք, մեկը հազարի, 10 հազարի, 100 հազարի կամ միլիոնի մեջ: Իսկ, թե հավաքագրված գումարների որ մասն է յուրաքանչյուր դեպքում խաղարկվում, երևի գիտեն միայն կազմակերպիչները և խաղացողներից եզակիները:

Այժմ եկեք պարզապես հաշվենք, թե տարիների ընթացքում ինչքան գումար ենք ծախսել տարաբնույթ լոտոների, վիճակախաղերի և այլ «հրաշքների» վրա: Եվ ինչքա՞ն լրացուցիչ գումար կունենայինք հիմա, եթե այդ գումարները շրջահայացորեն ներդրած լինեինք թեկուզ տարեկան 10-12 տոկոսով: Ի տարբերություն վիճակախաղերի, շրջահայացորեն կատարված ներդրումները, համբերությունն ու հետևողական աշխատանքը որոշակի ժամանակի ընթացքում սովորաբար տալիս են հավելյալ եկամուտներ և ապահովում են մեր նպատակների իրականացումը:

Ըստ էության, օրինական ֆինանսական շուկայում, մասնավորապես նաև արժեթղթերի շուկայում, ևս կարելի է «խաղամոլությամբ» զբաղվել և հաջողությամբ հսկայական գումարներ շահել կամ կորցնել ներդրված գումարները՝ ռիսկային արժեթղթերում ներդրումների միջոցով: Անհայտ և ժամկետային ածանցյալ արժեթղթերը կամ նոր ստեղծված և դինամիկ զարգացող ընկերությունների բաժնետոմսերը վիճակախաղերի ու լոտոների նման ռիսկային են և մեծ եկամուտներ են խոստանում: Ներդրում կատարելով այնպիսի արժեթղթերում, որոնցից ոչինչ չենք հասկանում կամ որոնց շուկայական գների ու թողարկողների վերաբերյալ բավարար տեղեկություն չունենք, մենք փաստորեն խաղամոլությամբ ենք զբաղվում:

Ենթադրենք, մենք պատահաբար դիտում ենք ինչ որ «Յրաշք Յայք» ընկերության ռեկլամը և անմիջապես գնում ենք այդ ընկերության բաժնետոմսեր: Մեր այսպիսի արարքը կլինի լոտո խաղալու նման խաղամոլություն՝ բայց արժեթղթերի շուկայում: Մենք պատկերացում ունեի՞նք, թե ինչ էր իրենից ներկայացնում այդ «Յրաշք Յայք» ընկերությունը: Տեղյա՞կ էինք նրա մրցակիցների մասին: Յետաբերքվե՞լ էինք, թե որքան են եղել նրա եկամուտներն անցյալում: Ստուգե՞լ էինք մեր գնած բաժնետոմսերի գների տատանումներն արժեթղթերի շուկայում: Ի վերջո, գիտեի՞նք արդյոք, ընդհանրապես, թե ինչ է արժեթուղթը կամ արժեթղթերի շուկան, ինչով են տարբերվում միմյանցից, ասենք թեկոզ, բաժնետոմսն ու պարտատոմսը, ինչպես են նրանք մեզ համար «փող աշխատում» և այլն:

Նախքան արժեթղթերում ներդրում կատարելը մենք պետք է պարզենք տվյալ արժեթղթերի թողարկողների ու արժեթղթերի շուկայի հետ առնչվող բազմաթիվ հարցեր: Հակառակ դեպքում, հենց այնպես որևէ «հրաշք» ընկերության արժեթղթեր գնելիս, մենք դառնում ենք սովորական խաղամոլ: Այսպիսի դեպքերում, անհաջողության մատնվելիս, բոլորովին չպետք է զարմանանք, որ կորցրել ենք մեր ներդրած գումարները:

Արժեթղթերի շուկայում նաև կարելի է երկարաժամկետ ներդրումների միջոցով

զբաղվել ապագայի բարեկեցության ապահովմանն ուղղված համբերատար և հետևողական աշխատանքով: Համոզվելու համար դիտարկենք արժեթղթերի առավել տարածված տեսակների եկամտաբերության որոշ վիճակագրական տվյալներ: Մեր երկրի արժեթղթերի շուկայի թերզարգացվածության և պատմական փորձի սահմանափակության պատճառով կբերենք վիճակագրական տվյալներ նաև այլ երկրների, մասնավորապես, Միացյալ Նահանգների, փորձից: Օրինակ, կարճաժամկետ պարտատոմսերում (Մասնավորապես, ԱՄՆ գանձապետական պարտատոմսեր և կարճաժամկետ պարտատոմսերում ներդրումներ կատարող ներդրումային հիմնադրամների արժեթղթեր) ներդրումները նախորդ հարյուրամյակի ընթացքում ապահովել են մոտավորապես 4 տոկոս տարեկան միջին եկամուտ:

Մեր երկրում ձևավորված եկամտաբերության չափանիշների համեմատ դա այնքան էլ շատ չի թվում: Սակայն, մինչև նախորդ հարյուրամյակի 60-ականներն ԱՄՆ-ում արժեթղթերում համարյա չկար, և տարեկան մոտ 4 տոկոս եկամուտն խիստ ցածր ռիսկերի գուժակցմամբ ընդունելի էր շատերի համար:

Բաժնետոմսերը պարտատոմսերի համեմատ ավելի բարձր եկամտաբերություն են ապահովում, սակայն ավելի ռիսկային են:

Օրինակ, նախորդ հարյուրամյակում բաժնետոմսերի միջին տարեկան եկամտաբերությունն ԱՄՆ-ում կազմել է 9.8 տոկոս, սակայն 1900-ականներին նվազել է մինչև տարեկան 0.17 տոկոս: 1950-ականներին միջին եկամտաբերությունն ավելացել է մինչև տարեկան 18.23 տոկոս, 1980-ականներին կազմելով 16.64 տոկոս, իսկ 1990-ականներին՝ 17.3 տոկոս:

Համեմատության համար ստորև ներկայացված են համառոտ ընդհանրացված տվյալներ Հայաստանի ֆինանսական շուկայի տարբեր գործիքների միջին եկամտաբերության վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայի հիմնական գործիքների ընդհանրացված ցուցանիշներ								
Հիմնական գործիքներ և Ցուցանիշներ	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
	ՊՊ եկամտաբերություն (364 օրյա)	25	20	15	12	6	4	5
ՀՀ դրամով վարկերի տոկոսադրույք	32	27	21	21	19	18	17	16
ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույք	18	15	10	7	5	6	6	5
Կորպորատիվ պարտատոմսերի եկամտաբերություն	-	-	-	-	-	-	-	7-10
Դրամ-դոլար փոխարժեք	540	555	573	579	533	457	416	342

Ինպե՞ս են եկամուտ բերում մեր ներդրումները

Փողի հավելանք և տոկոսը

Ընդհանուր առմամբ, բոլորս գիտենք, որ խնայողություններն ու ներդրումները կարող են «աշխատել» և մեզ հավելյալ եկամուտներ բերել հետևյալ երկու եղանակներով.

- **Ներդրվելիք գումարը պարտք ենք տալիս**, որպեսզի հավելյալ գումար կան «տոկոս» ստանանք: Այս հարաբերություններն են ծագում նաև մեր և որևէ ընկերության կամ պետության միջև, երբ մենք գնում ենք նրանց թողարկած պարտատոմսերը: Իրենց բաժնետերերին պարբերաբար շահութաբաժիններ վճարող ընկերությունների բաժնետոմսեր գնելու դեպքում ևս մենք կարող ենք պարբերաբար ստանալ որոշակի տոկոսային եկամուտ որպես այդ ընկերության շահույթի մեր մասը:
- **Ներդրվելիք գումարով գնում ենք որևէ ապրանք**, հուսալով, որ ժամանակի ընթացքում շուկայում կաճի այդ ապրանքի գինը, և մենք՝ վաճառելով մեր գնած ապրանքն ավելի բարձր գնով, կստանանք լրացուցիչ եկամուտ:

Նույն կերպ վարվելով մենք կարող ենք գնել նաև հուսալի, կայուն և շահութաբեր ընկերությունների բաժնետոմսեր: Առանց բաժնետերերի իրավունքների մանրամասն նկարագրության, հիշենք որ դառնալով որևէ ընկերության բաժնետոմսերի սեփականատեր (բաժնետեր), մենք ընդհանուր առմամբ մյուս բաժնետերերի նման իրավունք ենք ձեռք բերում մասնակցել

բաժնետերերի ժողովներին և քվեարկել մեզ պատկանող բաժնետոմսերի քանակի չափով, մասնակցել ընկերության կառավարմանը, ստանալ շահաբաժին ընկերության շահույթից և լուծարման դեպքում ստանալ ընկերության գույքի մեզ հասանելի մասը: Մենք կարող ենք նաև օտարել մեր բաժնետոմսերը, այդ թվում նաև դրանք արժեթղթերի շուկայում վաճառելու միջոցով: Ընկերության շահութաբեր աշխատանքի դեպքում մեծանում են այդ ընկերության կապիտալն ու ներդրողների հետաքրքրությունը նրա բաժնետոմսերի նկատմամբ: Եթե ընկերության բաժնետերերի ժողովը որոշի ընկերության շահույթից շահաբաժին չբաժանել բաժնետերերին, ապա դա չի նշանակում, որ մեր փողը չի աշխատել մեզ համար: Այդ դեպքում արժեթղթերի շուկայում կաճի այդ ընկերության բաժնետոմսերի գինը, և ավելի բարձր գնով տվյալ բաժնետոմսը վաճառելու դեպքում մենք կստանանք ներդրված փողի «մեծացած արժեքը» կամ հավելաճը:

Արժեթղթերում ներդրած մեր գումարները կարող են նաև միաճամանակ և «տոկոս բերել», և աճել իրենց արժեքով: Մասնավորապես, մեր ներդրած գումարն այսպես է աշխատում, երբ մեր գնած բաժնետոմսից մենք ստանում ենք շահաբաժիններ, իսկ հետո վաճառում ենք մեր բաժնետոմսերն ավելի թանկ գնով:

Ռիսկ և Եկամուտ

Որքան բարձր է սպասվող եկամուտը, այնքան մեծ է կորուստների հնարավորությունը կամ ռիսկը

Ինչպես արդեն նշել ենք, սովորաբար խնայողություն համարվում է մեր տնտեսած գումարի այն մասը, որը գումարի և նրա արժեքի պահպանման նպատակով տեղաբաշխում ենք հնարավորինս ապահով և իրացվելի ներդրումային գործիքներում կամ գնում ենք այնպիսի արագ իրացվելի ապրանքներ, որոնք հնարավորություն են տալիս ցանկացած ժամանակ հետ ստանալ մեր գումարը առանց էական կորուստների:

Ընդհանուր առմամբ այդպիսի հնարավորություն մեզ տալիս են բանկային ավանդները, ավանդային հավաստագրերը և պետական կարճաժամկետ պարտատոմսերը:

Որպես կանոն, ապահովության և ցանկացած պահին առանց զգալի կորուստների կանխիկ գումարի վերածվելու պահանջներին բավարարող խնայողությունները համեմատաբար քիչ եկամուտ են բերում:

Շատերը, եկամտաբերության նկատմամբ իրենց ակնկալիքները սահմանափակելով, ներդրված գումարը և հնարավոր նվազագույն եկամուտները կորցնելու ռիսկերից խուսափելու և անհրաժեշտության դեպքում անմիջապես կանխիկ գումարն առանց կորուստների ստանալու նպատակով, բավականաչափ միջոցներ տեղաբաշխում են իրացվելի և համեմատաբար նվազ եկամտաբեր խնայողության գործիքներում:

Սակայն, ներդրումների ռիսկայնությանն ու ապահովությանը մենք պետք է մոտենանք նաև նրանց փաստացի եկամտաբերության տեսանկյունից: Մասնավորապես, մենք պետք է զննահատենք, թե ապահով է արդյոք այն խնայողությունը, որի եկամտաբերությունը կարող է նույնիսկ արժեզրկումից ավելի ցածր լինել: Օրինակ, երբ ասենք երկու վերնաշապիկ չգնելով 20,000 դրամ ենք տնտեսում և տարիներով բանկում խնայված այդ դրամն ու դրա տոկոսները խնայողական հաշվից հանելով պարզում ենք, որ հիմա կարող ենք գնել միայն մեկ վերնաշապիկ:

Վերը նշվածի պատճառով, նույնիսկ ապահով ներդրումների ձգտելով, մենք հաճախ չենք անտեսում նաև ներդրված գումարի պահպանման առումով ավելի ռիսկային, սակայն ավելի շատ վաստակելու հնարավորություն տվող ներդրումները:

Ինչպես մենք համոզվեցինք նաև հավելյալ տոկոսների ուսումնասիրման ժամանակ, ավելի ռիսկային ներդրումների առավելություններն ապահով խնայողությունների նկատմամբ ակնհայտ են դառնում երկարաժամկետ ներդրումների դեպքում, երբ ստացված եկամուտները կուտակվում ու հավելյալ եկամուտ են բերում մեզ:

Ընդհանուր առմամբ, ներդրումների դեպքում ապահով խնայողությունների համեմատ մեծանում է մեր ներդրած մայր գումարը կամ դրա մի մասը կորցնելու հավանականությունը կամ ռիսկը: Սակայն, միևնույն ժամանակ, մենք խնայողությունների համեմատ ավելի շատ վաստակելու հնարավորություն ենք ստանում:

Շատերս մեր տնտեսած գումարները ներդնելով խնայողություններից ավելի ռիսկային ներդրումային գործիքներում, միաժամանակ մեր ներդրումներն ու եկամուտները ներդրումային ռիսկերից պաշտպանում ենք ներդրումները բաշխելով կամ տարալուծելով տարբեր ներդրումային գործիքներում: Այսպես վարվելիս մենք հույս ունենք, որ որոշ ներդրումներից մեր կրած կորուստները կփոխհատուցվեն այլ ներդրումներից առաջացող

հավելյալ եկամուտների շնորհիվ:

Այսպիսով, խնայողությունների և ներդրումների նպատակով գումար տնտեսելուց հետո մենք պետք է խնամքով դիտարկենք հնարավոր բոլոր տարբերակները և մտածենք, թե որ ներդրումներն ու դրանց զուգորդություններն են առավել համապատասխանում մեր նպատակներին, եկամտաբերության սպասելիքներին ու ռիսկի դիմագրավման հնարավորություններին:

Ոչ ոք չի կարող միանշանակորեն խորհուրդ տալ որևէ որոշակի ներդրումային գործիքում ներդրում կատարելու վերաբերյալ: Գոյություն ունեն ներդրումային բազմաթիվ գործիքներ, ներառյալ բաժնետոմսերը, մասնավոր ընկերությունների և պետական պարտատոմսերը, բանկային ավանդները, ավանդային հավաստագրերը և այլն, որոնցից պետք է ընտրել մեր հնարավորություններին, նպատակներին, սպասելիքներին ու ռիսկի դիմագրավման հնարավորություններին առավել համապատասխանողները:

Սակայն, մենք չպետք է մոռանանք նաև, որ նույնիսկ ներդրումների տարալուծումը տարբեր ներդրումային գործիքներում չի երաշխավորում, որ մեր ներդրումները չեն տուժի, եթե շուկայում գների համատարած անկում լինի: Համեմայն դեպս, այդ տարալուծումը կարող է օգնել մեզ հավասարակշռել տարբեր գործիքներում ներդրումների հնարավոր ռիսկերն ու եկամուտները:

Ընդհանրապես, ցանկացած ոլորտում, այդ թվում նաև արժեթղթերում, ներդրումներ կատարելիս պետք է հիշենք, որ որքան բարձր է սպասվող շահույթը, այնքան բարձր է նաև կորուստների հնարավորությունը կամ ռիսկը:

Ներդրումների աշխարհում կողմնորոշվելու համար շատ կարևոր է հստակ պատկերացնել և միմյանցից տարբերել հնարավոր ռիսկերի առանձին տեսակները, որոնցից հմնականները ներկայացված են ստորև.

- **Արժեզրկման ռիսկ**
Պայմանավորված է մեր ներդրումների ու խնայողությունների գնողունակության անկման հնարավորությամբ:
- **Վարկային ռիսկ**
Պայմանավորված է արժեթղթերի թողարկողի կողմից ներդրողների նկատմամբ ստանձնած իր պարտավորությունները կատարելու և պարտք վերցված գումարները վերադարձնելու կարողության կորստի հնարավորությամբ:
- **Տոկոսային ռիսկ**
Պայմանավորված է շուկայում տոկոսադրույքների աճի ժամանակ մեր ներդրումների շուկայական արժեքի անկման հնարավորությամբ:
- **Իրացվելիության ռիսկ**
Պայմանավորված է մեր ներդրումներն առանց ժամանակի էական կորստի, ընթացիկ շուկայական գնով կանխիկ գումարի փոխարկելու հնարավորության սահմանափակմամբ:
- **Շուկայական ռիսկ**
Պայմանավորված է քաղաքական և տնտեսական պայմաններից կամ ընկերության գործունեությունից կախված շուկայական գների տատանումներով:
- **Շուկայի համակարգային ռիսկեր**
Պայմանավորված են տեղեկատվության և հրապարակայնության խախտումներով, գնազոյացման մեխանիզմների և վճարահաշվարկային համակարգերի անկատարությամբ, պարտավորությունների կատարման ձգձգումներով և այլն:

Այսպիսով, մենք պետք է հստակ պատկերացնենք ներդրումների և ներդրումային տարբեր գործիքների, մասնավորապես տարբեր արժեթղթերի, հետ կապված բոլոր ռիսկերը, որպեսզի կարողանանք գնահատել դրանց դիմակայելու մեր պատրաստակամությունն ու հնարավորությունները և փորձենք հավասարակշռել դրանք ներդրումներից ակնկալվող մեր հնարավոր եկամուտների հետ:

Հետաքրքրվելով, թե վերջապես որոնք են ամենալավ ներդրումները, մենք ի վերջո համոզվում ենք, որ գոյություն չունի որոշակի միանշանակ ճիշտ պատասխան: Պատասխանը կախված է մեզանից յուրաքանչյուրի ապագայի պլաններից ու ներդրումային նպատակներից, կանխիկ գումարի ընթացիկ կարիքից, ներդրումային հնարավորություններից, ներդրումների հետ կապված գործողություններին հատկացվող ժամանակից, ներդրումների վերաբերյալ ունեցած գիտելիքներից, տեղեկատվությունից օգտվելու հնարավորություններից և այլն:

Ի վերջո, պատասխանը կախված է նրանից, թե կկարողանանք գիշերը քնել, եթե գնենք մեծ եկամուտներ խոստացող և ռիսկային արժեթուղթ, որի հետևանքով կարող ենք կորցնել ներդրված ողջ գումարը:

Որտե՞ղ ներդրում կատարել

Ավանդներ, թանկարժեք մետաղներ, անշարժ գույք, հնաոճ իրեր, արժեթղթեր, կուլեկտիվ ներդրումներ և այլն

Մենք կարող ենք հավելյալ եկամուտ ստանալու նպատակով մեր կուտակած միջոցները ներդնել տարբեր ֆինանսական և ոչ ֆինանսական ներդրումային գործիքների մեջ:



Ոչ ֆինանսական գործիքներ են համարվում այն ներդրումային գործիքները, որոնք հնարավորություն են տալիս ներդրումներ կատարել անշարժ գույքի, թանկարժեք մետաղների, հնաոճ իրերի և բարձրարժեք արվեստի գործերի մեջ, քանի որ դրանք ժամանակի ընթացքում հիմնականում ավելացնում են իրենց արժեքը՝ համապատասխանաբար մեծացնելով մեր ներդրած գումարները: Սակայն որ ֆինանսական որևէ գործիքում ներդրումներ կատարելուց առաջ պետք է ուսումնասիրել և հաշվի առնել տվյալ շուկայի առանձնահատկությունները, այդ թվում նաև շուկայական զների ժամանակային միտումները, գնագոյացման մեխանիզմները, շուկայի իրացվելիությունը, կայունությունը և այլն:

և ուսումնասիրել և հաշվի առնել տվյալ շուկայի առանձնահատկությունները, այդ թվում նաև շուկայական զների ժամանակային միտումները, գնագոյացման մեխանիզմները, շուկայի իրացվելիությունը, կայունությունը և այլն:

Անշարժ գույքում կատարված ներդրումները շուկայական գնի ավելացման դեպքում կարող են մեծացնել մեր խնայողությունները: Եվ եթե մենք որոշենք վաճառել թանկացած անշարժ գույքը, որը մենք գնել էինք որոշ ժամանակ առաջ, ապա մենք այդ անշարժ գույքի դիմաց կստանանք մեր վճարած գումարից զգալիորեն մեծ գումար: Սակայն այս ոլորտում ներդրումներ կատարելուց առաջ պետք է նկատի ունենալ անշարժ գույքի շուկայի ցածր իրացվելիությունը, գնագոյացման մեխանիզմների անկատարությունը, շուկայական գների հնարավոր անկումները և անշարժ գույքի շուկայի այլ առանձնահատկություններ:

Թանկարժեք մետաղները նույնպես ժամանակի ընթացքում թանկանալու հատկություն ունեն, չնայած կարող են ժամանակի որոշակի հատվածներում նաև զգալիորեն արժեզրկվել: Ուստի ներդրումներ կատարելով դրանցում մենք ևս կարող ենք ավելացնել մեր միջոցները, եթե նրանք շարունակեն անընդհատ թանկանալ: Սակայն ի տարբերություն անշարժ գույքի, որը երկարաժամկետ կտրվածքում հիմնականում ունի աճման միտում, թանկարժեք մետաղները՝ կախված միջազգային շուկաների զարգացման միտումներից, կարող են նաև արժեզրկվել, որի դեպքում մեր ներդրած միջոցները կարող են նվազել:

Անտիկվարիատի և բարձրարժեք արվեստի գործերի դեպքում ևս քիչ են դեպքերը, երբ դրանք կորցնում են իրանք արժեքը՝ այսինքն արժեքն ունեն հաշվել ցածր, քան մեր կողմից անցյալում վճարած նախկին գինը: Այդ ակտիվները հիմնականում ավելացնում են իրենց արժեքը և որքան մեծ է նրանց «տարիքը», այնքան մեծ է արժեքը: Սակայն այս ոլորտում ևս ներդրումներ կատարելուց առաջ պետք է նկատի ունենալ գտյալ ապրանքների ցածր իրացվելիությունը, գնագոյացման մեխանիզմների առանձնահատկությունները և այլն:

Ֆինանսական գործիքներ են համարվում ֆինանսական շուկայում առկա և շրջանառվող գործիքները, որոնց միջոցով մենք կարող ենք իրականացնել մեր խնայողությունները և ներդրումները ֆինանսական շուկայի պրոֆեսիոնալ մասնակիցների միջոցով: Հայաստանի Հանրապետությունում դրանց շարքին են դասվում հիմնականում բանկային ավանդները, բաժնետոմսերը և պարտատոմսերը:

Բանկային ավանդները առավել ապահով ֆինանսական գործիքներից են և համարվում են խնայողությունների հիմնական գործիքներից մեկը: Այս դեպքում մեր խնայողությունները յուրաքանչյուր տարվա կտրվածքով ավելանում են որոշակի տոկոսով: Ընդ որում, բանկային տոկոսադրույքները հիմնականում չեն փոփոխվում ավանդների ձևակերպման պայմանագրերի ամբողջ ժամանակահատվածի ընթացքում: Այս դեպքում կանխատեսելի է, թե որքան գումար մենք կունենանք որոշակի ժամանակահատվածներից հետո:



Արժեթղթերը, մասնավորապես բաժնետոմսերը և պարտատոմսերը ևս, ինչպես գիտենք, ֆինանսական շուկայի հիմնական ներդրումային գործիքներից են: Արժեթղթերում ներդրումներ կատարելիս, մեր ներդրումային նպատակներից ու հնարավորություններից կախված, սովորաբար մենք ընտրում ենք այս երկու ներդրումային գործիքներից որևէ մեկը կամ դրանց զուգորդությունները: Պարտատոմսեր ու բաժնետոմսեր գնելով մենք համապատասխանաբար դառնում ենք համապատասխան արժեթուղթը թողարկողի պարտատերը կամ բաժնետերը:

Բաժնետոմսերի և պարտատոմսերի միջև ընտրություն կատարելու խնդրում կողմնորոշվելու համար՝ ավելորդ մանրամասներից և մասնագիտական ձևակերպումներից խուսափելով, փորձենք հստակեցնել նրանց հիմնական ներդրումային առանձնահատկությունները: Ենթադրենք, մենք հավատում ենք, որ մեր սիրած գարեջուրն արտադրող տեղական ընկերությունում ներդրում կատարելն արդյունավետ ներդրում է: Մենք և մեր ծանոթները հաճույքով խմում ենք այդ ընկերության գարեջուրը: Ավելին, մենք տեղեկանում ենք, որ այդ գարեջուրը մրցանակներ է ստանում միջազգային տոնավաճառներում և ընկերությունը նախատեսում է ընդլայնել արտահանումը: Ներդրումային հետաքրքրությունն առաջանալուց հետո, մենք լրացուցիչ պարզում ենք ընկերության վիճակը կամ օգտվում ենք մասնագետի ծառայությունից, որն ուսումնասիրում է ընկերության վերաբերյալ առկա նյութերը և մեզ ներկայացնում իր կարծիքը: Ուսումնասիրությունից հետո մենք համոզվում ենք, որ դա կայուն ընկերություն է և դեռ երկար տարիներ կշարունակի իր գործունեությունը: Ցանկանալով ներդրում կատարել այդ ընկերության արժեթղթերում, մենք պարզում ենք նաև, որ ընկերությունը թողարկել է ինչպես բաժնետոմսեր, այնպես էլ պարտատոմսեր: Պարտատոմսերը ընկերության կողմից հետ են գնվելու (կամ մարվելու են) 3 տարի հետո, որի ժամանակ ընկերությունը մեզ վճարելու է մեր նախնական ներդրումը: Պարտատոմսով նախատեսված է նաև վճարել 10 տոկոս տարեկան եկամուտ, որն ընկերության կողմից իրականացվելու է տարեկան երկու անգամ՝ 5 ական տոկոսով:

Մյուս կողմից, ընկերությունը չունի իր թողարկած բաժնետոմսերը մարելու և մեր նախնական ներդրումը վերադարձնելու պարտավորություն: Բաժնետոմս գնելու դեպքում մենք լրացուցիչ ռիսկի ենք դիմում, քանի որ ընկերության ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում հնարավոր է, որ ընկերությունը չունենա շահույթ և չվճարի որևէ շահաբաժին (դիվիդենդ), իսկ բաժնետոմսերի շուկայական գները նվազեն շուկայում: Նման դեպքերում մենք չենք ստանա որևէ եկամուտ և կարող ենք նաև կորցնել մեր ներդրած գումարը կամ դրա մի մասը: Սակայն, հնարավոր է նաև, որ ընկերությունը լավ աշխատի և վճարի այնպիսի դիվիդենդներ, կամ բաժնետոմսերի գներն այնպես աճեն, որ ստացվող եկամուտը գերազանցի պարտատոմսերի համար նախատեսված տարեկան 10 տոկոս եկամուտը: Բաժնետոմս գնելու դեպքում մենք ընկերության գործերը լավ գնալու դեպքում ավելի մեծ եկամուտ ստանալու հնարավորություն ենք ստանում ընկերության շահույթից վճարվելիք դիվիդենդների կամ բաժնետոմսերի շուկայական գնի աճի շնորհիվ:

Այս ամենը կշռադատելուց հետք մենք երկմտում ենք, թե ինչ որոշում կայացնել: Մենք կարծում ենք, որ ընկերությունը կարող է կատարել պարտատոմսերի թողարկման հետ կապված իր պարտավորությունները, քանի որ արդեն հաջողությամբ գործում է մի քանի տարի և հիմքեր չկան մտածելու, որ այն կսնանկանա: Ոստի, եթե պարտատոմս ենք գնում, ապա հետ ենք ստանում մեր գումարը և տարեկան լրացուցիչ 10 տոկոս եկամուտը: Մյուս կողմից, ընկերության նախկին փորձից գիտենք նաև, որ ընկերության բաժնետոմսերի գինը շուկայում աճում է տարեկան 10-14 տոկոսով, և, որպես կանոն, ընկերությունն իր շահույթից բաժնետերերին վճարում է նաև շահաբաժին: Եթե այսպես շարունակվի, ապա բաժնետոմս գնելու դեպքում մեր տարեկան եկամուտը կարող է զգալիորեն ավելի մեծ լինել քան պարտատոմսերի դեպքում:

Սա մեր մտորումների այն ճիշտ ուղղությունն է, որի արդյունքում մենք պետք է համապատասխան որոշում կայացնենք: Սակայն միայն ժամանակը և փաստացի արդյունքները ցույց կտան, թե որն էր ճիշտ ընտրությունը:

Վերջնական ընտրություն կատարելուց առաջ պետք է հիշենք նաև այն, որ եթե գնենք բաժնետոմսեր, ապա պետք է մշտապես հետևենք ընկերության գործունեությանն ու բաժնետոմսերի շուկայական գների փոփոխություններին: Բաժնետոմսերը կարող ենք պահել այնքան ժամանակ, քանի դեռ ընկերությունը հաջողությամբ վաճառում է իր գարեջուրը, և բաժնետոմսերի գները չեն նվազում: Իսկ պարտատոմս գնելու դեպքում կարող ենք ավելի համզիստ լինել ու հազվադեպ հետևել ընկերության կամ արժեթղթերի շուկայի վիճակին, սակայն այս դեպքում ավելի քիչ եկամուտ կստանաք: Իսկ միզուցե երկուսից էլ գնե՞նք՝ հավասարակշռելու համար մեր կողմից ակնկալվող եկամուտներն ու հնարավոր ռիսկերը:

որոշում կայացնելուց առաջ եկեք ամփոփենք պարատոմների և բաժնետոմների հիմնական առանձնահատկությունները.

<ul style="list-style-type: none">• Պարատոմների դեպքում Մենք որոշակի տոկոսով և ժամկետով պարտք ենք տալիս: Ընկերությունը պարտավորվում է վերադարձնել ներդրված գումարն ու պարատոմների թողարկման պայմաններով նախատեսված տոկոսները: Սնանկացման կամ լուծարման դեպքում բաժնետերերի նկատմամբ իր պարտավորությունները կատարելուց առաջ ընկերությունը պարտավոր է վճարել իր պարտքերը պարատոմների սեփականատերերին:• Բաժնետոմների դեպքում Մենք իրավունք ենք ստանում մասնակցել տվյալ ընկերության կառավարմանը: Ընկերության շահութաբաժինները աշխատանքի դեպքում մենք կարող ենք նաև շահույթի բաշխումից շահաբաժիններ ստանալ:¹ Ընկերության լավ աշխատանքի դեպքում մեր բաժնետոմների գինը ևս կարող է աճել արժեթղթերի շուկայում: Այս դեպքում մենք կարող ենք ավելի մեծ եկամուտ ստանալ, քան պարատոմներից: Սակայն, եթե ընկերությունը վատ աշխատի, վնասներ կրի և սնանկանա կամ լուծարվի, ապա մենք եկամուտ չստանալու, կամ մեր ներդրած գումարը մասնակի կամ ամբողջովին կորցնելու ավելի մեծ ռիսկի ենք ենթարկվում:
--

Ինչևէ, քանի որ որոշում կայացնելու ժամանակ դեռևս ունենք, եկեք մեկ անգամ ևս մտածենք, թե ինչու հենց այս ընկերության արժեթղթերը գնելու մասին սկսեցինք մտածել: Միգուցե մրցակից ընկերության արժեթղթեր ևս գնենք: Իսկ ի՞նչն է մեզ խանգարում հետաքրքրվել նաև այլ ոլորտներում հաջողությամբ գործող ընկերությունների արժեթղթերով:

Իրոք, ներդրումային գործիքների ընտրությունից ոչ պակաս կարևոր է նաև մեր ներդրումային կարիքներին համապատասխանող ընկերությունների կամ ոլորտների ճիշտ ընտրությունը: Տարբեր ընկերությունների արժեթղթերի միջև ընտրություն կատարելիս մենք պետք է գիտակցենք, որ ցանկացած ընկերության արժեթղթերում ներդրում կատարելով մենք կարող ենք հավելյալ դրամ վաստակել կամ, ընդհակառակը, կորցնել մեր գումարները:

Որպես ընդհանուր կարծիք լավ կլինի հիշենք, որ որևէ ընկերության արժեթղթեր գնելով մենք կարող ենք փող աշխատել, եթե.

- Ընկերության գործունեությունն իր մրցակիցներից ավելի արդյունավետ է:
- Այլ ներդրողները ևս համոզված են դրանում և մեր ունեցած արժեթղթերը վաճառելիս կլինեն գնել ցանկացողներ:
- Ընկերությունը շահութաբեր է և կարողանում է վճարել պարատոմների տոկոսները և բաժնետոմների շահաբաժինները:
- Ընկերության ղեկավարներն ազնիվ, աշխատասեր և բանիմաց մարդիկ են:
- Ընկերության արժեթղթերը մշտական պահանջարկ ունեն ներդրողների կողմից, և արժեթղթերի շուկայում դրանց գների տարօրինակ ու անհասկանալի անկումներ չեն նկատվում:
- Ընկերությունը հետևում է կորպորատիվ կառավարման սկզբունքներին, պարբերաբար տեղեկատվություն է հրապարակում իր գործունեության արդյունքների վերաբերյալ և այլն:

Ընդհակառակը, մենք որևէ ընկերության արժեթղթեր գնելով, կարող ենք կորցնել մեր գումարները, եթե.

- Տվյալ ընկերության մրցակիցներն ավելի արդյունավետ են աշխատում:

¹ Ըստ “Բաժնետիրական ընկերությունների մասին” ՀՀ օրենքի՝ ցանկացած բաժնետիրական ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները: Ընդ որում հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատերը ՀՀ օրենսդրության և համապատասխան ընկերության կանոնադրության համաձայն իրավունք ունի՝

- մասնակցել ընկերության բաժնետերերի ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.
- մասնակցել ընկերության կառավարմանը.
- ստանալ շահութաբաժիններ՝ ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.
- առաջնահերթ կարգով ձեռք բերել ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե ՀՀ օրենսդրությամբ և ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.
- ստանալ ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ ընկերության հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին և արտադրատնտեսական գործունեությանը.
- ընկերության բաժնետերերի ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.
- հանդես գալ առաջարկություններով ընկերության բաժնետերերի ժողովներում.
- ընկերության բաժնետերերի բաժնետերերի ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.
- դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և ՀՀ գործող օրենսդրությանը հակասող որոշումների բողոքարկման նպատակով.
- ընկերության լուծարման դեպքում ստանալ ընկերության գույքի իր հասանելիք մասը.
- ունենալ տվյալ ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

- Սպառողները չեն ցանկանում գնել ընկերության արտադրանքը:
- Դեկավարները արդյունավետ չեն աշխատում, ազնիվ չեն, շատ են ծախսում, ծախսերը գերազանցում են եկամուտները:
- Հնարավոր ներդրողները չեն ցանկանում մեր վճարած գնով գնել այդ ընկերության արժեթղթերը:
- Ընկերության ղեկավարները թյուր տեղեկատվություն են տրամադրում ընկերության գործունեության վերաբերյալ, խոսում են գոյություն չունեցող շահույթների ու պայմանագրերի մասին և նույնիսկ կեղծում են ֆինանսական տվյալները:
- Արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները զբաղվում են ընկերության արժեթղթերի գնի մանիպուլյացիայով, որի հետևանքով սխալ կարծիք է ստեղծվում դրանց գնի մասին:
- Այլ պատճառներ, որոնք մեզ դրդում են վաճառել տվյալ ընկերության արժեթղթերը շուկայում դրանց գների անկման ժամանակ:

Այս հարցերում կողմնորոշվելու և տարբեր ընկերությունների արժեթղթերի միջև ընտրություն կատարելու համար մենք պետք է ուսումնասիրենք մատչելի տեղեկատվական նյութերն ու համեմատենք առանձին ոլորտների կամ ընկերությունների գործունեության արդյունավետությունն ու ներդրումային գրավչությունը: Ամեն դեպքում, արժեթղթերում ներդրումներ կատարելուց առաջ, պետք է համեմատենք առկա ներդրումային հնարավորությունները և որոշենք, թե որ ներդրումներն են առավել համապատասխանում մեր ֆինանսական հնարավորություններին, ներդրումային նպատակներին և ռիսկի դիմակայման կարողությանը:

Մենք պետք է նաև խորհրդակցենք արժեթղթերի առք ու վաճառքի ծառայություններ առաջարկող մասնագիտացված կազմակերպությունների (բրոքեր/դիլերային ընկերություններ և արժեթղթերի հավատարմագրային կառավարիչներ) համապատասխան աշխատակիցների հետ և ճշտենք, թե.

- Տվյալ արժեթղթերը գրանցված են ՀՀ Կենտրոնական բանկում և/կամ Հայաստանի ֆոնդային բորսայում:
- Ֆոնդային բորսայում արժեթղթերի ցուցակման որակական ո՞ր հարթակում են շրջանառվում այդ արժեթղթերը:
- Անցյալում ներդրողները բողոքներ ունեցե՞լ են տվյալ թողարկողներից:
- Տվյալ արժեթղթերի թողարկողներն անցյալում պորբլեմներ ունեցե՞լ են իրենց հաճախողների, ներդրողների, բորսայի կամ ՀՀ Կենտրոնական բանկի և այլ անձանց հետ:
- Արժեթղթերի և թողարկողների մասին հրապարակման ենթակա ամբողջ տեղեկատվությունն է հրապարակվում և մեզ հայտնի:
- Արժեթղթերի առուվաճառք առաջարկող անձն ունի՞ մասնագիտական որակավորում և լիազորված է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված և ֆոնդային բորսայի անդամ որևէ բրոքեր/դիլերային ընկերության կողմից:
- Տվյալ բրոքեր/դիլերային ընկերությունը կամ արժեթղթերի առուվաճառք առաջարկող անձն ունեցե՞լ է պորբլեմներ ՀՀ Կենտրոնական բանկի, բորսայի կամ ներդրողների հետ և այլն:

Ընդհանուր առմամբ, գործնական ներդրումներ կատարելու համար շատերիս անհրաժեշտ կլինի մի շարք հարցերում ստանալ մասնագիտական խորհրդատվություն և աջակցություն: Սասնագետների հետ մենք պետք է քննարկենք մի շարք հարցեր, այդ թվում նաև, թե.

- ի՞նչ մասնաբաժիններով և ո՞ր արժեթղթերում տեղաբաշխել ներդրումային միջոցները:
- Ինչպե՞ս հետևել արժեթղթերի շուկայի տեղեկատվությանն ու վերլուծել այն:
- Ի՞նչ տվյալների հիման վրա և ինչպե՞ս կայացնել որոշումներ բաժնետոմսերի, պարտատոմսերի կամ այլ արժեթղթերի գնման/վաճառքի վերաբերյալ:
- Ե՞րբ և ի՞նչ գներով գնել կամ վաճառել արժեթղթերը:
- Ինչպե՞ս ընտրել մեզ սպասարկող բրոքերային ընկերությունը, ձևակերպել գնման/վաճառքի պատվերները և վերահսկել նրանց գործունեության արդյունավետությունը:
- Ինչպե՞ս հետևել թողարկողների գործունեությանը կամ մասնակցել նրանց կառավարմանը և այլն:

Կոլեկտիվ ներդրումներ

Շատ քիչ ներդրողներ ունեն բավարար գիտելիքներ վերը նշված և հարակից այլ հարցերում ինքնուրույն կողմնորոշվելու համար: Դրա հետ մեկտեղ, միայն սակավաթիվ խոշոր ներդրողներ են կարող մշտապես վարձել համապատասխան մասնագետների այդ խնդիրներով անընդհատ զբաղվելու համար: Բացի այդ, շատերիս ներդրումային միջոցներն ինքնին բավարար չեն դրանց տարալուծված տեղաբաշխման և ներդրումային հավասարակշռված փաթեթների ձևավորման ու մասնագիտական կառավարման համար:

Այս խնդիրների լուծման համար, որոնց առջև կանգնում են մանր ներդրողներն ամբողջ աշխարհում, մի շարք երկրներում առանձին մանր ներդրողները միավորում են իրենց միջոցներն իրենց ընդհանուր ներդրումային նպատակների շրջանակներում և

հանդես են գալիս որպես մեկ միասնական ներդրող: Կոլեկտիվ ներդրումների մասնատիպ ծառայություններ մի շարք երկրներում առաջարկում են ներդրումային հիմնադրամները (ներդրումային ընկերություններ, փոխադարձ ֆոնդեր, հավատարմագրային կառավարման հիմնադրամներ և այլն), որոնք իրենց կողմից թողարկված արժեթղթերի վաճառքի միջոցով հավաքագրում են մանր ներդրողների միջոցները և դրանք տեղաբաշխում այլ թողարկողների արժեթղթերում:

Մեր երկրում ներդրումային հիմնադրամները դեռևս գործնական տարածում չեն ստացել և մենք դեռևս չենք կարող օգտվել կոլեկտիվ ներդրումների առավելություններից: Սակայն, արժեթղթերի շուկայի զարգացմանը զուգընթաց, անշուշտ կծնավորվեն տարաբնույթ ներդրումային հիմնադրամներ, որոնք իրենց ուրույն տեղը կգրադեցնեն ներդրողներին ֆինանսական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների շարքում:

Իսկ առայժմ, մեր ներդրումային նպատակների հստակեցումից և ներդրումներ կատարելու որոշում կայացնելուց հետո, ՀՀ Կենտրոնական բանկի, Հայաստանի ֆոնդային բորսայի, առանձին բանկերի և խորհրդատվական ընկերությունների կողմից թողարկված ուղեցույցների օգնությամբ կամ խորհուրդներից օգտվելով, մենք կարող ենք ընտրել համապատասխան բանկը կամ բրոքեր/դիլերային ընկերությունը և սկսել մեր ներդրումային գործունեության առաջին քայլերը:

Գործընկեր կազմակերպության ընտրությունը

Ի՞նչպես կարող ենք ընտրել կազմակերպությունը, որի հետ ցանկանում ենք աշխատել

Գործընկեր կազմակերպության ընտրությունը կարևոր խնդիր է, քանի որ ընտրելով այն, մենք ներդրումների կատարման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում աշխատելու ենք նրա հետ: Հետևաբար, որքան վստահելի է մեր գործընկեր կազմակերպությունը, որքան ընդունելի են նրա կողմից ներկայացվող պահանջները և ծառայությունների պայմանները, որքան գրագետ և բարեխիղճ են նրա աշխատակիցները, այնքան հեշտ և հաճելի կլինի աշխատել նրա հետ: Ահավասիկ որոշ սկզբունքներ, որոնցով մենք պետք է առաջնորդվենք գործընկեր կազմակերպություն ընտրելիս.



- **Կազմակերպության տեղեկատվական թափանցելիությունը:** Որքան թափանցիկ և հանրության համար բաց է աշխատում ներդրումային ընկերությունը, այնքան մեծ վստահություն է այն վայելում: Ինչքան հեշտությամբ կարելի է գտնել այդ կազմակերպության, նրա կողմից մատուցվող ծառայությունների և դրանց պայմանների մասին մեզ հետաքրքրող տեղեկատվությունը և ինչքան ամբողջական և մանրամասն ինֆորմացիա է տեղակայված այդ կազմակերպության ինտերնետային կայքում, այնքան վստահելի է այդ կազմակերպությունը:
- **Կազմակերպության վարկանիշը:** ՀՀ ԿԲ-ը և որոշ տեղեկատվական գործակալություններ այժմ իրականացնում են կազմակերպությունների վարկանիշների սահմանում՝ ելնելով որոշակի սկզբունքներից: Հիմնվելով այդ վարկանիշային ցուցանիշների հրապարակումների վրա մենք կարող ենք ընդրել առավել վստահելի գործընկերոջ:
- **Առաջարկվող պայմանները:** Յուրաքանչյուր կազմակերպություն առաջարկում է ներդրումային ծառայությունների իր պայմանները, որոնք կարող են էականորեն տարբերվել: Հաշվի առնելով այս առաջարկվող պայմանների առանձնահատկությունները, մենք կարող ենք ընտրել այն ներդրումային կազմակերպությանը, որի պայմաններն առավել ընդունելի կլինեն մեզ համար:
- **Ներկայացվող պահանջները:** Կախված ընկերությունից, կարող են տարբերվել նաև ֆինանսական կազմակերպությունների կողմից ներկայացվող պահանջները ներդրումներ կատարողների նկատմամբ: Այս հանգամանքը ևս կարող է զգալի դեր խաղալ գործընկերոջ ընտրության հարցում, այնպես որ պետք է մանրամասն ուսումնասիրենք նաև յուրաքանչյուր կազմակերպության կողմից առաջարկվող պահանջները:

Այսպիսով, նշված սկզբունքներին հետևելը հնարավորություն է ընձեռում մեզ ընտրել նախընտրելի կազմակերպությունը և արդյունավետ աշխատել նրա հետ:

Մեր հիմնական սխալները

Ի՞նչ սխալներ են գործում սկսնակ ներդրողները

Այժմ, ներդրումային գործնական քայլեր կատարելուց առաջ, եկեք որպես ամփոփում ուշադրություն դարձնենք, թե հաճախակի հանդիպող ինչ հիմնական սխալներ են գործում սկսնակ ներդրողները և փորձենք խուսափել դրանցից. Ահա այդ հիմնական սխալներից մի քանիսը, որոնք մենք հիմնականում արդեն դիտարկել ենք այս գրքույկում.

- Ոչինչ չանել:**
Չկա երաշխիք, որ շուկայում գները կաճեն մեր ներդրումների առաջին օրվա, անսվա կամ նույնիսկ տարվա ընթացքում և մենք շոշափելի, արագ և երաշխավորված եկամուտներ կստանանք: Սակայն կա երաշխիք, որ ոչինչ չանելով մենք չենք ստանա հավելյալ եկամուտ, չենք բարելավի մեր կյանքի որակը թոշակի անցնելուց հետո, չենք լուծի մեր ուսման վարձի հարցերը և այլն:
- Ուշ սկսել:**
Ներդրումների հետաձգումը մեր ներդրումային սխալներից երկրորդն է և զիջում է միայն բոլորովին ներդրումներ չկատարելուն: Ինչքան շուտ ենք սկսում, այնքան երկար են «աշխատում» մեր ներդրումները: Եթե մեր տարիքը վաղուց անցել է քսանը, ապա մենք պարտավոր ենք սկսել «հենց հիմա»:
- Պարտքերը վճարելուց առաջ ներդրումներ կատարել:**
Եթե մենք խնայողական հաշվում փող ունենք և միաժամանակ պարտքեր ենք վճարում, ապա մեկ անգամ ևս պետք է ստուգենք, թե որի փաստացի տոկոսն է ավելի բարձր՝ հաշվի առնելով նաև հարկերն ու արժեզրկումը: Պարտքերի հավասարակշռման համար ներդրումային փաստացի եկամուտների տոկոսը հարկերի վճարումից հետո պետք է գերազանցի պարտքի և արժեզրկման տոկոսը: Եթե դա հնարավոր չէ, ապա ներդրումներ կատարելուց առաջ պետք է փակենք մեր պարտքերը:
- Բացառապես կարճաժամկետ ներդրումներ կատարել:**
Բացառապես կարճաժամկետ ներդրումներ ցանկալի է կատարել միայն այն դեպքում, երբ մենք իրոք ունենալու ենք մեր ամբողջ փողի կարիքը կարճ ժամանակ անց: Այն փողը, որ մեզ պետք չի գալու առնվազն երեք տարի, լավ կլինի ներդրել հուսալի և կայուն ներդրումային գործիքներում: Եթե գալիք տարում մեզ անհրաժեշտ է լինելու կանխիկ դրամ, ապա դրա համար պետք է օգտվենք կարճաժամկետ ներդրումներից կամ խնայողության գործիքներից, ինչպիսիք են պետական կարճաժամկետ պարտատոմսերը կամ բանկային ավանդները:
- Ապահովությունը:**
Եթե մենք երիտասարդ ենք, ապա մեր ազատ ներդրումային գումարների մեծ մասը ցանկալի է ներդրել արժեթղթերում: Մենք բավականաչափ ժամանակ ունենք դիմակայելու շուկայի վարուվերումներին և քաղել երկարաժամկետ ներդրումների դրական պտուղները: Երիտասարդ տարիքում չի կարելի խուսափել բաժնետոմսեր ձեռք բերելուց: Ավելի մեծ տարիքում մենք ձգտում ենք կայունության, խուսափում ենք ռիսկերից և ցանկանում ենք պահել հիմնականում պարտատոմսեր: Չնայած դրան բաժնետոմսերը միշտ էլ կազմում են բոլոր ներդրումային փաթեթների զգալի մասը:
- Կրակի հետ խաղալ:**
Տարբեր մարդկանց համար տարբեր տեսակի ներդրումներն են նպատակահարմար: Ուստի, եթե արդեն որոշել ենք ներդրումներ կատարել, ապա նախ պետք է մշակենք մեր ներդրումային փաթեթը: Այդ ժամանակ, ներդրումների տարալուծման նպատակով, երևի որոշակի մասնագիտական խորհուրդ ստանալու կարիք ունենանք: Ցանկացած դեպքում, ցանկալի չէ ամբողջ գումարը դնել միայն մի տեղ, որը կարող է ցանկացած պահին հիասթափեցնել մեզ:
- Խաղամոլություն՝, թե ներդրում:**
Եթե չենք ուզում բախտ փորձել և օգտվել ֆինանսական շուկայում արագ գերշահույթներ ստանալու հնարավորությունից, ապա յուրաքանչյուր ներդրումից առաջ պետք է մշտենք, թե արդյոք ամեն ինչ ենք պարզել տվյալ ներդրման, ընկերության, նրա արժեթղթերի, ֆինանսական շուկայում տիրող իրավիճակի և մեզ սպասարկող կազմակերպության վերաբերյալ:
- Կեղծիքների գրավչությունը:**
Պետք է զգուշանալ արագ շահույթի խոստումներից, ներքին տեղեկություններից օգտվելու արտոնությունից, ինչպես նաև որևէ որոշակի ներդրում և գործարք կատարելու հորդորանքներից ու ցուցումներից: Սրանք բոլորը կեղծիքի նախանշաններ են, որոնք հաճախ հրամցվում են բարձր եկամուտների հետ կապված գրավիչ խայծերի միջոցով:
- Խորհուրդներ և որոշումներ:**
Մեզ սպասարկող կազմակերպությունը պարտավոր է խորհուրդ տալ միայն այնպիսի ներդրումների վերաբերյալ, որոնք համապատասխանում են մեր ներդրումային նպատակներին, հնարավորություններին ու ռիսկերի դիմակայման ունակությանը: Ցանկացած դեպքում ներդրումների վերաբերյալ որոշումներ պարտավոր ենք կայացնել ինքներս, քանի որ ոչ ոք պատասխանատվություն չի կրում մեր ներդրումային ռիսկերի համար:
- Չավաքածուներն ու թանկարժեք իրերը որպես ներդրումներ:**
Պետք չէ վստահաբար և մեկընդմիջտ որոշել, որ ոսկեղենը, հին կահույքը, թանկարժեք մեքենաներն ու հավաքածուները անվերապահորեն ապահովություն և բարելավություն են բերելու մեզ գալիք տարիների ընթացքում: Եթե հնարավոր լիներ դրանք օգտագործել երկարաժամկետ ներդրումների համար, ապա արժեթղթերն ու արժեթղթերի շուկան հավանաբար գոյություն չէին ունենա ընդհանրապես:
- Շուկայական առուվաճառք:**
Ներդրումներ կատարելու ամենալավ եղանակը տարալուծված երկարաժամկետ ներդրումներն են: Եթե առանց համապատասխան մասնագիտական գիտելիքների և պատրաստվածության զբաղվենք արժեթղթերի անընդհատ առուվաճառքով, ապա մեզ նվազագույնը կհեղեղեն միջնորդավճարները: Այդ դեպքում մենք չենք ստանա այն օգուտները, որ ավելի քիչ ջանքեր գործարկելով ստանում են երկարաժամկետ ներդրումներ կատարողները:

Ամփոփում

Մենք բավականին համբերություն ցուցաբերեցինք և ներդրումների ուսումնասիրման ճանապարհին կատարեցինք տարրական գիտելիքներ և տեղեկատվություն ստանալու առաջին քայլը:

Մենք ծանոթացանք հավելյալ տոկոսների «հրաշքի» հետ և համոզվեցինք, որ պարտքերը, ներդրումներ չկատարելը, արժեզրկումը, խաղամոլությունը, հարկերը և մեր ներդրումային սխալները կարող են ի չիք դարձնել մեր երազներն ու ապագայի պլանները:

Մենք կազմեցինք նաև ընդհանուր պատկերացումներ խնայողությունների և ներդրումների, ներդրումային հիմնական ֆինանսական գործիքների, այդ թվում նաև արժեթղթերի հիմնական տեսակների՝ պարտատոմսերի ու բաժնետոմսերի մասին:

Մենք որոշակի գաղափար կազմեցինք եկամուտների և ռիսկերի, ինչպես նաև դրանց հավասարակշռության մասին:

Մենք այժմ կարող ենք ճշգրտել մեր անձնական ներդրումային նպատակներն ու հնարավորությունները և մուտք գործել ֆինանսական շուկա՝ մեզ սպասարկող կազմակերպությունն ընտրելու և ներդրումային առաջին գործնական քայլերը կատարելու համար:

Մենք որևէ գործնական քայլ կատարելուց առաջ պետք է հիշենք, որ մեր ապագա բարեկեցությունն ինքներս ենք կառուցելու, և այդ ճանապարհին մեր հաջողության գրավականը մեր կողմից կատարված գիտակցված ու հաշվարկված քայլերն են:

Գրքույկը լրամշակված է “Emerging Markets Group” ընկերության կողմից իրականացվող Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ)՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների զարգացման ծրագրի կողմից:²

Գրքույկը պատրաստված է հանրության լայն շրջանակների համար:

² Գրքույկի նախնական տարբերակը մշակվել և հրատարակվել է 2001 թվականին “PricewaterhouseCoopers” ընկերության կողմից իրականացված ԱՄՆ ՄՁԳ ՀՀ կապիտալի շուկայի զարգացման ծրագրի կողմից՝ Հայաստանի ֆոնդային բորսայի համագործակցությամբ:
Ապագայի պլաններ, խնայողություններ և ներդրումներ – ուղեցույց

Հավելված

ՀՀ բանկերի և ներդրումային կազմակերպությունների ցուցակ

ՀՀ ԲԱՆԿԵՐ

ՀՀ Բանկեր	Հասցե	Հեռախոսահամար	Ինտերնետային կայք
«Անելիք բանկ» ՓԲԸ	ք. Երևան, Բաղրամյան 75	22 87 17, 22 82 80	www.anelik.am
«Առևտրային բանկ» ՓԲԸ	ք. Երևան, Ս.Սկրտչյան 12	58-31-31, 56-22-58	www.areximbank.am
«Արդշինհիմնվեստբանկ» ՓԲԸ	ք. Երևան, Գ.Լուսավորիչ 13	52 85 13	www.ashib.am
«Արարատ բանկ» ԲԲԸ	ք. Երևան Պուշկինի 19	53 43 31	www.araratbank.am
«Արցախբանկ» ՓԲԸ	ք. Երևան, Կիևյան 3	27 77 19, 27 77 29	www.artsakhbank.am
«Արմսվիսսբանկ» ՓԲԸ	ք. Երևան, Խանջյան 13/ 2	52 95 93, 58 44 19	www.armswissbank.am
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ	ք. Երևան, Բայրոնի 1	56 85 85	www.acba.am
«Բիբլոս» ՓԲԸ	ք. Երևան, Ամիրյան 18/3	53 03 62	www.itb.am
«ԲՏԱ ինվեստ բանկ» ՓԲԸ	ք. Երևան, Վարդանանց 13	52 74 71, 54 74 51	www.bta.am
«Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ	ք. Երևան, Պարոնյան 21/1	59 14 00	www.armdb.com
«Էյչ-Էս-Բի-Սի Հայաստան» ՓԲԸ	ք. Երևան, Տերյան 66	58 70 88	www.hsbc.am
«Ինեկոբանկ» ՓԲԸ	ք. Երևան, Թումանյան 17	56 37 25	www.inecobank.am
«Կոնվերս բանկ» ՓԲԸ	ք. Երևան, Վ.Սարգսյան 26/1	54 54 52, 56 92 48	www.conversebank.am
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	ք. Երևան, Ամիրյան 23/1	56 33 32, 53 20 07	www.aeb.am
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	ք. Երևան, Նալբանդյան 48	54 05 02, 52 39 29	www.armbusinessbank.am
«Հայմերարտբանկ» ՓԲԸ	ք. Երևան, Վ.Սարգսյան 2	58 99 06, 56 11 11	www.impexbank.am
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ	ք. Երևան, Նալբանդյան 46	58 04 51	www.vtb.am
"Մելլաթ բանկ" CJSC	ք. Երևան, Ամիրյան 6	58 17 91, 58 15 23	www.mellatbank.am
«Կասկադ բանկ» CJSC	ք. Երևան, Դեղատան 6	52 04 32, 52 05 93	www.cascadebanking.com
«Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ	ք. Երևան, Հանրապետության 44/2	56 20 36, 52 17 05	www.prometeibank.am
«Յունիբանկ» ՓԲԸ	ք. Երևան, Հանրապետության 39	52 15 32	www.unibank.am

ՀՀ ներդրումային ընկերություններ

ՀՀ ներդրումային ընկերություններ	Հասցե	Հեռախոսահամար	Ինտերնետային կայք
"Alphasecurities" LLC	ք. Երևան, Աբելյան 7-32,	39-78-66	-
"Արմենիա Ինվեստ" ՓԲԸ	ք. Երևան, Բաղրամյան 6	52-40-40, 52-88-99	-
"Արմենբրոկ" ՓԲԸ	ք. Երևան, Ամիրյան 7	53-92-57	http://www.armenbrok.com
"Աստվան" ՍՊԸ	ք. Երևան, Բազրատունյաց 15, բն. 70	42-32-10	-
"Կասկան Ինվեստմենտս" ՓԲԸ	ք. Երևան, Հրաչյա Քոչար 5	26-38-40, 26-55-28	http://www.cascadeinvmts.com
"Ալիսնվեստ" ՍՊԸ	ք. Երևան, Ռոստոմյան 21, բն. 41	45-41-12	-
"Ecapital Asset Management" CJSC	ք. Երևան, Գ.Լուսավորիչ 15/1	54-15-27	-
"Ֆյուչըր կապիտալ մարկետ" ՍՊԸ	ք. Երևան, Այգեծոր 69, բն. 20	22-61-35, 47-82-37	-
"Պրայվիտ Ինվեստ" ՓԲԸ	ք. Երևան, Նալբանդյան 50, բն. 26	52-18-12	-
"Ռեմեսա" ՓԲԸ	ք. Երևան, Վարդանանց 13	54-45-27	-
"Տոնտոն" ՍՊԸ	ք. Երևան, Դեզատան 2	54-54-77, 54-54-07	-
"Երևան-Բրոկեր" ՍՊԸ	ք. Երևան, Թումանյան 32, բն. 16	54-46-57	-